

ՏԵՂԵԿԱՏՈՒ

DIEGHIEGAIDOLU

ديجيجادو

Հրատարակութիւն Գահիրէի ՀԲԸՄ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՀԻՐԷԻ «ԾԻԱԾԱՆ» ՄԱՆԿԱԿԱՆ
ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ 20-ԱՄԵԱԿԻ ՀԱՄԵՐԳ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՍՐԱԳԻՐ	Խմբագրական Մտորումներ	1
Մարուշ Երամեան	Սէմ Սիմոնեանի Անդրադարձը	2
ԽՍՐԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԱՏՈՒ	Բացում «Օ. Պըլըքտանեան» սրահի	4
Մարտիկ Պալաեան	Բարի Գալուստ	5
ՍՐԱԳՐԻՉ	Պարգեւատրում Գերազանցներուն	6
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ	Բացում վերանորոգուած Կոկանեան Սրահի	9
Անայիս Ճիգմեճեան	Բացման Խօսք Լալա Շամամեան-Նիկողեան	10
ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ	Տուն Դարձ	11
ՁԵՒԱԽՐՈՒՄ	Հպարտառիթ Զոյգ Ամեակներ	12
Շահէ Լուսարարեան	Նոր Հրատարակութիւն՝ Պ. Թէրզեան	13
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ	Սալոն Հելիոպոլիս 46	14
Nubar Digital	ՀԲԸՄիութեան Անմիջական Օգնութիւնը	15
Գահիրեի ՀԲԸՄ-ի	Հայերը Եգիպտոսի Մէջ	16
լուրերուն հետեւեցէք	Անժիկ Յակոբեան-Կանիմեան	18
www.agbuegypt.com	Վկայագրերու Ցանձնում	19
կայքէջով:	Բժիշկ-Մատենագիր	20
Ծանօթացէք «Հայաստան	Անժիկ Յակոբեան-Կանիմեան	21
եւ Հայերը Արաբական	Այցելութիւն	22
Սամուլին մէջ. 1876-1923»	Ծիածանագոյն 20-ամեակ մը	23
հաւաքածոյի նիւթերուն	64 տարի առաջ	24
www.arminmedia.com	Կաղանդի Տօնակատարութիւն	25
կայքէջով:	Արմատ Աշուն 2024	26
«Տեղեկատու»ի յօդուածա-	Կաղանդի Տօնակատարութիւն	27
գիրներուն արտայայտած	Սօսի Ներերեան-Յակոբեան	28
կարծիքները անպայման-	Մեծ Բիթ	29
օրէն չեն ներկայացներ	Յուսաբեր 80	30
Գահիրեի ՀԲԸՄի պաշտօ-	Նամակ Խմբագրութեան	31
նական տեսակետները:	Կարօ Թօսունեան	32
ԹԻԻ 114 ՆՈՐ ՇՐՋԱՆ,	Հայ Հեթանոս Աստուածներ	33
ՅՈՒՆՈՒԱՐ 2025	Փէկի Հինայեքեանի Արուեստը	34
	Երէկ եւ Այսօր	35
	Սօսի Ներերեան-Յակոբեան	36
	Կարճ Լուրեր	37
	Հ.Մ.Ը.Մ. Արարատի Մրցաշարքը	38
	Սօսի Ներերեան-Յակոբեան	39
	Աղեքսանդրիոյ Փարոսը	40
	Սրբուհի Թերեզայի Մրցաշարքը	
	Սօսի Ներերեան-Յակոբեան	
	Անդամական Շնորհակալութիւն	



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Եգիպտահայոց այս տարին յատկանշուեցաւ քանի մը յոբելենական հանդիսութիւններով, ամեակներու տօնակատարութեամբ: Այս երեւոյթը ինքնին խօսուն ապացոյց մըն է ոչ միայն գաղութին վաղեմութեան, այլ նաեւ անոր այսօրուան եռանդին, շարունակելու ժառանգուած աւանդը եւ զայն ամբողջութեամբ փոխանցելու եկող սերունդին:

Գաղութը տօնախմբեց Ազգային Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբին քսան ամեակը, ապա ՀԲԸՄիութեան Տեղական Մասնաճիւղի «Ծիածան» մանկական երգչախումբին քսան ամեակը, եւ ի վերջոյ Գալուստեան Ազգային Վարժարանի 170 եւ Նուպարեան Ազգային Վարժարանի 100 ամեակները, Գալուստեան Նուպարեան Ազգային վարժարանի վկայականաց բաշխման հանդիսութեան ընթացքին:

Յուսաբեր Մշակութային Ընկերակցութիւնը եւս տօնախմբեց իր հիմնադրութեան 80-ամեակը:

Ոչ միայն ամեակներ տօնախմբեց եգիպտահայութիւնը, այլ եւ գաղութին անցնող եռամսեակը յատկանշուեցաւ նկարչական քանի մը ցուցահանդէսներով, որոնց մասին կը կարդաք «Տեղեկատու»ի էջերուն:

Առաջինը Աղեքսանդրիոյ մէջ կայացած եգիպտահայ գեղանկարիչներու ցուցահանդէսն էր, երկրորդը՝ Հելիոպոլսոյ Մարզական Ակումբին (Heliopolis Sporting Club) տարեկան ցուցահանդէսը, որուն կը մասնակցէր Վահէ Վարժապետեան, իսկ երրորդը՝ Վահէ Վարժապետեանի անհատական ցուցահանդէսն էր, երկու այլ նկարիչներու հետ միասնաբար:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս տեղի ունեցաւ Գահիրէի «Գիրքի Ցուցահանդէս»ը (56րդը), որ սկսեր է 1969-ին, Գահիրէի երկհազարամեակին առիթով: 2006 թուականին այս ցուցահանդէսը

գրաւեր է աշխարհի երկրորդ տեղը, Ֆրանքֆուրթի ցուցահանդէսէն ետք:

Այս տարուան ցուցահանդէսը կը տարբերէր անով, որ գաղութիս ծանօթ գրագէտ, մամուլի աշխատակից Թովմաս Կորկիսեանի նոր, երրորդ գիրքը (արաբերէն լեզուով) մաս կը կազմէր ցուցահանդէսին, Գահիրէի մեծագոյն հրատարակիչներէն «Տար Էլ Շրուգ»ի կողմէ հրատարակուած եւ ներկայացուած:

Նոր տարին սկսանք խառն ապրումներով. մէկ կողմէ Լիբանան ունեցաւ իր նոր նախագահը, երկու տարի աննախագահ մնալէ ետք: Կայունութեան յոյսեր ապրեցաւ լիբանանցին եւ անոր հետ՝ լիբանանահայ համայնքը:


Միւս կողմէ սակայն Ամերիկայի ամենէն հայաշատ քաղաքներէն Լոս Անճելըս ինկաւ անկասելի հրդեհներու աղէտին տակ, որուն զոհ գնաց նաեւ մեր համայնքը, ինչպէս Սահակ Մեսրոպ Աւետարանական վարժարանը, որ ամբողջութեամբ հրոյ ճարակ դարձաւ եւ փճացաւ: Ամէն կողմէ մխիթարական խօսքեր կը տեղան, «կրկին պիտի վերականգնենք» իմաստով: Բայց պէ՞տք է ամէն անգամ մեռնիլ, վերապրումի մեր կարողութիւնը կրկին եւ կրկին փաստելու համար: Բաւ չէ՞ արդէն:

Սուրիոյ մեր համայնքը եւս – որ իրաւամբ Սփիւռքի մայր գաղութ կոչուած է տասնամեակներէ ի վեր – փոքր քայլերով կ'ուղղուի դէպի յոյս եւ լոյս: Մինչեւ այսօր դպրոցները բաց են, հայերը իրենց աւանդութիւնները կը շարունակեն կատարել, միշտ աղօթելով որ կեանքը այս անգամ բարի ըլլայ իրենց հանդէպ եւ իրենց յոյսերը ի դերեւ չեւլեն:

Յունուար ամիսը «յատկանշուեցաւ» բազմաթիւ մեծ ու փոքր աղէտներով: Կ'աղօթենք որ Տէրը պահէ պահպանէ այս երկիրը, որ շատ վաղուց դարձեր է երկրորդ հայրենիք եգիպտահայոց համար:



ՀԲԸՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ ՍԷՄ ՍԻՄՈՆԵԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԱՆՑՆՈՂ ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ



2024 թուականը անցումային շրջան էր, յատկապես երբ ես ստանձնեցի ՀԲԸՄիության ութերորդ նախագահի պաշտօնը՝ յաջորդելով Պերճ Սեդրակեանին: Անոր 22 տարուան ուշագրաւ նախագահութիւնը յաջորդեց ՀԲԸՄի Կեդրոնական վարչութեան մէջ անոր տասնամեայ ծառայութեան: Պատիւ է շարունակել տարեվերջի ուղերձով մը հանդէս գալու աւանդութիւնը:

Անցնող Հոկտեմբերին ՀԲԸՄիության 93-րդ Ընդհանուր Ժողովը վերջին տարիներու ամենէն աշխոյժ եւ իրադարձութիւններով լի ժողովն էր: Ղեկավարութեան փոփոխութիւնը հնարաւորութիւն ընձեռեց անդրադառնալու ՀԲԸՄի երկու տասնամեակներուն վրայ երկարող աճին եւ նորարարութիւններուն, միաժամանակ մեր հաւաքական երախտագիտութիւնը յայտնելով ՀԲԸՄիութենէն հեռացող նախագահ Պերճ Սեդրակեանին, որ կը նախագահէր հայոց արդի պատմութեան ամենակարեւոր շրջանին. երիտասարդութեան զարգացման վրայ անոր դրած շեշտը ընդլայներ է ՀԲԸՄի Երիտասարդ Մասնագէտներու ցանցը հայաշխարհին մէջ: Միայն այս տարի մենք ողջունեցինք վեց նոր Երիտասարդ Մասնագէտներու ԿՐ խումբեր Ամմանէն, Պուդափէշտէն եւ Գորտոպայէն մինչեւ Տապլին, Մելպուռն եւ Սիտնի:

Երբ կը սկսիմ իմ սեփական ճանապարհորդութիւնը որպէս ՀԲԸՄիության Նախագահ, պարտաւոր կը զգամ սերտօրէն հաղորդակցիլ մեր տեղական մասնաճիւղերուն հետ, հինգ ցամաքամասերու վրայ:



Սկսելով Հարավային Ամերիկա ճամբորդութենէս, զիս խորապէս յուզեց հայկական ոգին Արժենթինի, Պրագիլիոյ եւ Ուրուկուէի մէջ: Յաջորդ տարուան այս շրջանին ես նպատակ ունիմ աւելի լայն պատկերացում կազմելու հայաշխարհի եւ մեր բազմազան համայնքները միաւորող կապերուն մասին:

Միաժամանակ, այս տարի այլ կարելոր անցումներ տեղի ունեցան. 2023 թուականի Սեպտեմբերին Արցախէն հայերու տեղահանումէն ետք, ՀԲԸՄիութիւնը ձեռնարկեց լայնածաւալ շտապ օգնութեան աշխատանքներ՝ ապահովելով սնունդ, հագուստ, ապաստան եւ անհրաժեշտ աջակցութիւն: 2024 թուականին մենք մեր ուշադրութիւնը տեղափոխեցինք երկարաժամկետ օգնութեան վրայ՝ անդրադառնալով ֆիզիքական, մտաւոր եւ հոգեկան վերականգնումի: Մենք ընդլայնեցինք ՀԲԸՄի Գլոտիա Նազարեանի անուան դարմանատունը, Արցախէն նոր մասնագէտներով: Առաջարկեր ենք քրհորի անվճար հետազօտութիւններ եւ հոգեկան առողջութեան ծառայութիւններ: ՀԲԸՄ Նայիրի ճամբարի միջոցով կազմակերպեցինք նաեւ բուժական (therapeutic) շաբաթօրեակներ, արցախցի մայրերու եւ երեխաներու համար:

Կարելոր ծրագիր էր նաեւ արցախահայութիւնը Հայաստանի ընկերային-տնտեսական համակարգին մերելու աշխատանքը. հիմնուելով ՀԲԸՄի LEAP-ի (Սորվիր վաստկիլ Արցախ) ծրագրին յաջողութեան վրայ, որ սկիզբ առած էր Արցախի մէջ, աւելցուեցան անգլերէն լեզուի դասաւանդումն ու աշխատանքային խորհրդատուութիւնը: Այս ծրագիրը կրնայ կարելոր դեր ունենալ արցախահայութեան արժանապատուութիւնն ու տնտեսական անկախութիւնը վերականգնելու իմաստով:

ՀԲԸՄիութիւնը պատրաստ է դիմագրաւելու համաշխարհային մարտահրաւերները, որոնք նոր ձեւաւորում կու տան աշխարհին, մեր ազգին եւ մեր կազմակերպութեան: Թէեւ ապագան տակաւին անորոշ է, ես վստահ եմ, որ մեր մեծ միութիւնը կը յարմարի նոր կացութեան եւ կը զարգանայ շնորհիւ մեր նուիրատուներու առատաձեռնութեան, մեր կամաւորներու ոգեշնչումին եւ մեր գործընկերներու համագործակցութեան:

Ձեր բարի կամքն ու աջակցութիւնը կենսական նշանակութիւն ունին, ամբողջ աշխարհի մէջ հայ կեանքը ծաղկեցնելու համար:

Նոր տարուան ընդառաջ խաղաղութիւն եւ բարեկեցութիւն կը մաղթեմ ձեզի եւ ձեր ընտանիքներուն:

Յարգանքով՝
ՍԷՄ ՍԻՄՈՆԵԱՆ
Նախագահ ՀԲԸՄիութեան



ԲԱՑՈՒՄ «Օ. ՊՐԼՐՔՏԱՆԵԱՆ» ՍՐԱՀԻ

Կատարում աշխատանք մը գնահատելը իսկապէս առաքինութիւն է. իսկ երբ այդ աշխատանքը կատարողը ա՛լ մեզի հետ չէ, այդ առաքինութիւնը կը դառնայ սրտի եւ հոգիի պարտք մը, զինք սիրողներուն եւ գնահատողներուն համար:

ՀԲԸՄիութիւնը իր անսակարկ յարգանքի եւ սիրոյ արտայայտութիւնը ունեցաւ անժամանակ կերպով մեզմէ հեռացած, ՀԲԸՄիութեան Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ Օննիկ Պրլրքտանեանի հանդէպ, երբ անոր անունով կնքեց ՀԲԸՄի մանկական «Ծիածան» երգչախումբին փորձերու սրահը:

Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 30 Նոյեմբեր 2024-ի երեկոյեան, «Օ. Պրլրքտանեան» սրահէն ներս, ներկայութեամբ Թեմիս Բարեջան Առաջնորդ Գերապատիւ Տ. Աշոտ Սրբազան Մնացականեանի, Եգիպտոսի Հայ Կաթողիկէ



Համայնքին Վիճակաւոր Արհիապատիւ Տ. Գրիգոր Օգոստինոս Եպս. Գուսանի, Օննիկ Պրլրքտանեանի ընտանիքին բոլոր անդամներուն եւ կոկիկ բազմութեան մը:

Բացման խօսքը արտասանեց Գահիրէի Տեղական Մասնաճիւղին ատենապետ դոկտ. Ճորճ Սիմոնեան: Իրենց սրտի խօսքը արտայայտեցին Գերապատիւ Տ. Աշոտ Սրբազան Մնացականեան, Արհիապատիւ Տ. Գրիգոր Օգոստինոս Եպս. Գուսան, Օ. Պրլրքտանեանի երէց որդին՝ դոկտ. Արթո Պրլրքտանեան եւ «Ծիածան» երգչախումբին ղեկավարուհի

տիկին Գոհար Ղազէլեան:

Երեք երգերով ելոյթ ունեցաւ «Ծիածան» մանկական երգչախումբը, որմէ ետք ներկաները հիւրասիրութեան մը շուրջ փոխանակեցին իրենց յուշերը ողբացեալ ատենապետին մասին:



ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍ



ՀԲԸՄիության Գահիրեի Մասնաճիւղի կարգ մը վարչականներ հանդիպում մը ունեցան Հայաստանի Հանրապետության Եգիպտոսի նորանշանակ դեսպան տիար Արմէն Սարգիսեանին հետ:

Անոնք հայութեան, մանաւանդ եգիպտահայութեան առնչուած կարգ մը այժմէական հարցեր քննարկեցին եւ բարի գալուստ եւ յաջող կեցութիւն մաղթեցին դեսպանին:

2024 թուականի 24 Հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով նշանակուել է Եգիպտոսի Արաբական Հանրապետության մէջ Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազօր դեսպան (Գահիրէ):

Արմէն Սարգիսեան ծնած է Երեւան, 6 Յունուար 1974-ին:

Աւարտել է Երեւանի Պետական Համալսարանի Արեւելագիտութեան կաճառը 1997-ին, իսկ վարդապետական աստիճանի տիրացել է 2000 թուականին, Մոսկուայի Diplomatic Academy of the Russian Federation-էն: 2004 թուականին Գերմանիոյ մէջ հետեւել է Security studies-ի, G. Marshal Կեդրոնէն ներս:

Կը տիրապետէ հայերէն, արաբերէն եւ ռուսերէն լեզուներուն: Ամուսնացած է եւ ունի մանչ զաւակ մը:

Տիրացել է բազմաթիւ շքանշաններու, որոնց շարքին.

-«Մխիթար Գոշ» Հայաստանի նախագահէն.

-Ճոն Կիրակոսեանի յիշատակի մետալ Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութենէն.

-«Անդրանիկ Օզանեան» մետալ Պաշտպանութեան Նախարարութենէն.

-"Cooperation" մետալ Սուրիոյ Պաշտպանութեան Նախարարութենէն:



ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ ԳԵՐԱԶԱՆՑՆԵՐՈՒ

Որքան ուրախալի երեւոյթ է տեսնել գաղութին պատանիներն ու երիտասարդները իրենց յաջողութիւններուն մէջ եւ արդարօրէն հպարտանալ իրենցմով:

Ուրախութեան եւ հպարտութեան առիթ մը ընծայեց մեզի Չորեքշաբթի, 13 Նոյեմբերի երեկոն, երբ ՀԲԸՄիութեան Գահիրէի մասնաճիւղին հրաւերով տասնեակ մը եւ աւելի պատանիներ, երիտասարդներ եւ անոնց ծնողքը լեցուցեր էին Ս. Չազըր սրահը, ներկայ ըլլալու դպրոցական – համալսարանական անցնող տարեշրջանի գերազանց աշակերտներու պարգեւատրումին:

Երեկոն սկսաւ բացման խօսքովը Գահիրէի մասնաճիւղի ատենապետ դոկտ. Ճորճ Սիմոնեանի, որ բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, ըսաւ.

«Այս տարի, առաջին անգամ ըլլալով, որոշեր ենք պարգեւատրել ո՛չ միայն հանգրուանային դասարաններու գերազանցները, այլ ընդհանրապէս բոլոր դասարաններու գերազանցները»:

Ապա աւելցուց.

«Աւանդական դարձած է այս հանդիսութիւնները սկսիլ մշակութային ձեւով, ընդհանրապէս փոքր դասախօսութեամբ մը կամ որոշ նիւթի մը ներկայացումով: Այս աւանդութիւնը սկսեր էր ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղի ողբացեալ ատենապետը՝ տոքթ. Վիգէն Ճիզմէնեան: Այսօր,



Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնին (Գահիրէի Համալսարան, Գրականութեան Կաճառ) կազմակերպած մրցումին յաղթող առաջին երեք ուսանողուհիները մեզի պիտի ներկայացնեն «Հայերը Եգիպտոսի մէջ, Օսմանեան ժամանակաշրջանին» նիւթը:

Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնը անցնող շրջանին ընթերցումի մրցում մը կազմակերպած էր. ընթերցումին նիւթը պէ՛տք էր ընտրուէր Կեդրոնին հրատարակած գիրքերու ցանկէն, որոնք հայկական նիւթեր կը շօշափեն, հեղինակութեամբ արաբ դասախօսներու եւ գրագէտներու: Ուսանողները, ընթերցելէ ետք գիրքերէն մէկը, պէտք էր ամփոփումով մը ներկայացնէին իրենց կարդացած գիրքը: Մրցումին դատակազմին իր մասնակցութիւնը բերած էր նաեւ դոկտ. Գէորգ Գազանճեան: Յաղթական հռչակուէր են երեք ուսանողուհիներ՝ Մոնա Ապտէլ Սապուր Մոհամէտ, Րուքիա Ապտէլ Նասէր Ալի եւ Զէյնապ Խալիլ Սալէհ, որոնցմէ առաջին երկուքը (Զէյնապը կը բացակայէր) փոխն ի փոխ ներկայացուցին Օսմանեան ժամանակաշրջանին Արեւմտահայաստանի տարբեր գաւառները, ուր ապրեր են Եգիպտոս գաղթած եւ կայք հաստատած հայերը, անոնց խմբաւորումները Եգիպտոսի տարբեր քաղաքներուն մէջ, թուաքանակը, արհեստները,



աշխատանքը, ամուսնութեան եւ ամուսնալուծումի օրէնքները, դրամաօժիտի դրութիւնը, տուրքերը, պետութեան յարաբերութիւնը անոնց հետ, կրօնական դրուածքը, հայ եկեղեցւոյ յարաբերութիւնը ղպտի եկեղեցիին հետ, եւ այլ մանրամասնութիւններ: Երկու ուսանողուհիները նշեցին նաեւ, թէ հայերը քանի մը լեզուներ կը խօսէին՝ հայերէն, արաբերէն, թրքերէն, յաճախ նաեւ անգլերէն կամ ֆրանսերէն, եւ կարելոր դեր խաղացած են թարգմանական գործին մէջ:

Դոկտ. Ճ. Սիմոնեան դիտել տուաւ, թէ Գահիրէի Համալսարանի Հայկական Ուսումնասիրութիւններու Կեդրոնը կը վայելէ աջակցութիւնը ՀՀ դեսպանութեան, Գահիրէի Ազգային Առաջնորդարանին եւ ՀԲԸՄիութեան: Յարգելի ատենապետը յորդորեց ներկաները, որ միշտ նեցուկ կանգնին այս Կեդրոնին, որովհետեւ կարելոր առաքելութիւն մը կը կատարուի այնտեղ:

Գահիրէէն 18 ուսանողներ եւ 5 աշակերտներ, ինչպէս նաեւ 7 ուսանողներ Աղեքսանդրիայէն, պարգեւատրուեցան ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղի վարչական անդամներուն ձեռքով՝ ատենապետ դոկտ. Ճ. Սիմոնեան, տիարք Ռուբէն Թէրզիպաշեան, Գէորգ Աւանեան, Յակոբ Գարակէօզեան, դոկտ. Գէորգ Գազանճեան, Քրիս Միքայէլեան, տիկին Ռուբինա Ասլանեան-Նորարեւեան եւ օժանդակ տիկին Անի Պօղոսեան – Թաշճեան:



Պարգեւատրուողներուն առաջինն էր վարդապետական աստիճանի տիրացած աղեքսանդրաբնակ դոկտոր Իվան Կարպիս Միսքճեան (տեսնել «Տեղեկատու» նոր շրջան, Հոկտեմբեր 2024, թիւ 113, էջ 8):

Մեծ էր ծնողներուն եւ բոլոր ներկաներուն ուրախութիւնը, ի տես այլ տարիներու համեմատ այսօրուան գերազանցներու մեծ թիւին, եւ անոնց յաջողութեան արդիւնքներուն:

Երեկոն փակուեցաւ հիւրասիրութեան մը շուրջ, ուրախ զրոյցով եւ շնորհաւորանքներով:

ԳԵՐԱԶԱՆՑՆԵՐՈՒ ԱՆՈՒՆՆԵՐԸ 2023-2024

ԳԱՀԻՐԷ

Համալսարանի Աւարտական տարի 85% (Գերազանց)

1. Լորիտանա Ռաֆֆի Մկրտիչեան	(Գերազանց)	Բարձր պատուով
2. Արին Ռուբէն Սիմոնեան	(Գերազանց)	Բարձր պատուով
3. Նաթալի Գէորգ Կոտուլոշեան	(Գերազանց)	

Համալսարանի Տեղափոխական տարիներ (Գերազանց)

4. Նաթաշա Ռաֆֆի Բախշանեան	(Գերազանց)	4րդ տարի
5. Մարիա Հրայր Տրդատեան	(Գերազանց)	4րդ տարի
6. Լարա Սիմոն Չամքէրթէնեան	(Գերազանց)	3րդ տարի
7. Ռիթա Եուսէֆ Գէորգեան	(Գերազանց)	3րդ տարի
8. Արեգ Քրիս Սիմոնեան	(Գերազանց)	3րդ տարի



9. Քարեն Հրայր Տրդատեան	(Գերազանց)	3րդ տարի
10. Լիանորա Լեւոն Նիկոլեան	(Գերազանց)	2րդ տարի
11. Կլօրիա Ռաֆֆի Մկրտիչեան	(Գերազանց)	2րդ տարի
12. Սեւան Արմեն Պալթայեան	(Գերազանց)	2րդ տարի
13. Մանուէլ Եուսէֆ Գէորգեան	(Գերազանց)	1ին տարի

Համալսարանի Աւարտական տարի 75% (Շատ լաւ)

14. Ժիրայր Յակոբ Գարակէօզեան	(Շատ լաւ)	Բարձր պատուով
15. Ժորժ Սարգիս Անդրանիկեան	(Շատ լաւ)	
16. Ալեքսան Ծորճ Զերտէլեան	(Շատ լաւ)	
17. Նուպար Ռուբէն Սիմոնեան	(Շատ լաւ)	

Համալսարանի Տեղափոխական տարիներ (Շատ լաւ)

18. Ժանօ Ժորժ Սապաղ	(Շատ լաւ)	1ին տարի
---------------------	-----------	----------

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

Դոկտորայի աստիճանի աւարտին

1. Իվան Կարպիս Միսքեան	Դոկտորայի աստիճան
------------------------	-------------------

Համալսարանի Աւարտական տարի 85% (Գերազանց)

2. Խաչիկ Լեւոն Փափազեան	(Գերազանց)	Բարձր պատուով
-------------------------	------------	---------------

Համալսարանի Աւարտական տարի 75% (Շատ լաւ)

3. Կարօ Էտուար Պահարեան	(Շատ լաւ)	Բարձր պատուով
-------------------------	-----------	---------------

Համալսարանի Տեղափոխական տարիներ (Գերազանց)

1. Ալօնտրա Եուսէֆ Խոսրոֆ	(Գերազանց)	4րդ տարի
2. Մելիսա Ժագ Թեճերեան	(Գերազանց)	3րդ տարի
3. Պերճ Եուսէֆ Թօփալեան	(Գերազանց)	3րդ տարի
4. Մանուէլա Միհրան Գալայճեան	(Գերազանց)	1ին տարի

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՆՈՒՊԱՐԵԱՆ ԱԶԳ ՎԱՐԺԱՐԱՆ

Երկրորդականի Աւարտական դասարան 85 % - 2000 Ե.Ո.

1. Ժիրայր Հրայր Տրդատեան	Երկրորդական	(90.36 %)
2. Տեսիլ Քրիս Սիմոնեան	Երկրորդական	(87.07 %)
3. Էտի Ժորժ Զերտէլեան	Երկրորդական	(86.70 %)

Պատրաստականի Աւարտական դասարան 90 % - 1000 Ե.Ո.

4. Նաթալի Ժան Թահթապրունեան	Պատրաստական	(93.93 %)
5. Մարիչիա Սարգիս Զերտէլեան	Պատրաստական	(91.70 %)

ԲԱՑՈՒՄ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ ԿՈԿԱՆԵԱՆ ՍՐԱՀԻ

Սփիւռքի տարածքին ցրուած գաղութներուն մէջ – որոնք կը մարին եւ նորեր կ'առկայծին, տխուր կաղանդի ծառի մը տպաւորութիւնը ձգելով – միշտ չէ որ ակումբ մը իր դռները բաց կը պահէ, անընդհատ եւ անընդմիջաբար, 75 տարիներ:

Նման ադամանդեայ ամեակներ սրտաբուխ կերպով կը պահանջեն օտնախմբուիլ, կարծէք հաստատելու համար լռութեամբ առնուած խոստումը՝ շարունակել մնալ տաքուկ բոյն մը անդամներուն համար, պահել ու պահպանել ժառանգուած աւանդը եւ զայն փոխանցել նոր սերունդին:

Նման օտնախմբութիւն մըն էր 28 Նոյեմբեր 2024-ին գեղեցիկ հանդիսութեամբ մը տեղի ունեցած բացումը Կոկանեան վերանորոգուած Սրահին, միաժամանակ նշելով Կոկանեան Սրահի 75-ամեակը, հոծ բազմութեան մը ներկայութեամբ:

Հանդիսութեան պաշտօնական բացումէն առաջ Թեմիս բարեջան Առաջնորդ Տ. Աշոտ Սրբ. Մնացականեանն ու Արհիպատիւ Տ. Գրիգոր Օգոստինոս Եպս. Գուսան, Վիճակաւոր Եգիպտոսի Հայ Կաթողիկէ Համայնքին միասնաբար իրենց աղօթքներով օրհնեցին վերանորոգուած սրահը:

Հանդիսութիւնը սկսաւ ատենապետուի Լալա Շամամեան-Նիկոլեանի բացման շատ գեղեցիկ խօսքով, որուն ընդմէջէն ան վեր առաւ թէ՛ Կոկանեան Սրահի պատմութիւնը, թէ՛ մեծապէս գնահատեց անոր վարչութիւններուն մէջ աշխատած բոլոր անձերը, անցեալէն մինչեւ օրս:

Օրուան հանդիսավարն էր տիկին Անի Պօղոսեան-Թաշճեան:

Հանդիսութեան ներկայ էին Թեմիս բարեջան Առաջնորդ Տ. Աշոտ Սրբ. Մնացականեանն ու Արհիպատիւ Տ. Գրիգոր Օգոստինոս Եպս. Գուսան, Վիճակաւոր Եգիպտոսի Հայ Կաթողիկէ Համայնքին, ՀՀ նորանշանակ արտակարգ եւ լիազօր դեսպան Արմէն Սարգսեան եւ իր ազնիւ տիկինը, Թեմական եւ Քաղաքական Ժողովներու ատենապետները, մշակութային եւ մարզական միութիւններու ատենապետները:

Բեմ հրաւիրուեցաւ սրահի նորոգութեան եւ ներքին ձեւաւորումին պատասխանատու



ճարտարապետուի Սաթօ Աբգարեան, եւ ատենապետուի Լալա Շամամեան-Նիկոլեանի ձեռքով ստացաւ Կոկանեան Սրահի վարչութենէն իրեն տրուած գնահատանքի բրգածել յախճապակեայ յուշանուէրը:

Իր սրտաբուխ զեղումը ունեցաւ Կոկանեան սրահի պատուոյ ատենապետ տիար Կարպիս Եազըճեան, որուն խօսքը համեմուած էր յուշերով եւ մտորումներով, ներկաները եւս իր հետ տանելով անցեալի քաղցր օրերուն:

Ազգային Հիմնադրամի ատենապետ տիար Ժիրայր Տէփոյեան փոխանցեց իր սրտի խօսքը եւ որպէս ՀԲԸՄ-իութեան Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի փոխ ատենապետ յայտարարեց, թէ Յանձնաժողովը երկու հարիւր հազար Ե. Ո. (200.000 Ե.Ո.) կը նուիրէ Կոկանեան սրահին:

Տոքթ. Հրայր Տրդատեան, ատենապետը ՀՄԸՄ-ՆՈՒՊԱՐ մարզական միութեան, արծաթազօծ պնակ մը նուիրեց Կոկանեան Սրահի 75-ամեակին առիթով:

Ապա իր գեղեցիկ ծայնով սրահին մթնոլորտը ջերմացուց Ռուբէն Սաատ, երգելով երկու հայերէն եւ մէկ անգլերէն երգեր:

Ջանգեզուր պարաօլիմբէն ընտրուած խումբ մը մեծապէս խանդավառեց ներկաները, մասնագէտ պարուսոյց Էլէն Մարտիրոսեանի աւանդականի եւ արդիականի գեղեցիկ ներհիւսումով կատարուած պարադրումով:

Մեծ հետաքրքրութիւն արթնցուց Կոկանեան Սրահի պարտէզէն մինչեւ նորոգուած սրահ գացող անցքին մէջ ցուցադրուած



ԿՈԿԱՆԵԱՆ ՍՐԱՀԻ ԱՏԵՆԱՊԵՏՈՒՀԻ ԼԱԼԱ ՇԱՄԱՄԵԱՆ-ՆԻԿՈԼԵԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՕՍՔԸ

Գերաշնորհի Ս. Աշոտ Եպիսկոպոս Մնացականեան,
Բարեխնամ Առաջնորդ Եգիպտոսի Հայոց թեմին,
Գերապայծա՛հ Ս. Գրիգոր Օգոստինոս Եպս. Գուսան,
Վիճակաւոր Առաջնորդ Ադեքսանդրիոյ եւ Երուսաղէմի Կաթողիկէ Հայոց,
Մեծարգո՛յ Տիար Արմէն Սարգսեան, Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան եւ ազնուափայլ տիկինը,
Պատկառելի Թեմական եւ Քաղաքական Ժողովներու ատենապետներ,



Կազմակերպութիւններու եւ Միութիւններու յարգելի՛ ատենապետներ, հոգեւոր հայրեր եւ սիրելի հիւրեր,
1949 թուականի Ապրիլին, Հայ Ազգային Հիմնադրամի որոշումով եւ մեծ բարերար Լեւոն Կոկանեանի նախաձեռնութեամբ ու անունով, Հելիոպոլսոյ ճիշդ սրտին մէջ, Նուպարեան դպրոցին դիմաց ծնունդ կ'առնէ նոր աստղ մը, որ շուտով եգիպտահայութեան համար կը դառնայ ազգային ինքնութիւն ու մշակոյթ պահպանող օճախ մը:

Պատահական չեմ գործածեր “օճախ” բառը, քանի որ իսկապէս, հիմնադրութենէն մինչ օրս, Կոկանեան Սրահը յաջողած է ըլլալ ջերմ օրրան մը, տուն մը եւ հաւաքող երդիք մը բոլորիս համար:

Հոս, մեր պարտէզին մէջ է, որ ժամերը աննկատ կը սահին իրարու պատմելով մեր հարցերը, կիսելով մեր ցաւերն ու ուրախութիւնները, շատ յաճախ՝ աշխատելով, կատակելով, վիճելով, գործելով, ձեռնարկի մը պատրաստուելով... Չեմ կասկածիր, որ հիմա, այստեղ գտնուողներուն մեծ մասը, սրահին հետ կապուած անգին յուշեր ունի, որոնք ժամերո՛վ կրնայ պատմել: Մեզմէ շատեր այս ակումբին մէջ մեծցած են, ծառայած են անոր եւ

անաղարտ պահած են զայն, հոս ապրած, հոս գիշերած, կամաւոր կերպով անոր պարտէզը լուացած կամ սեղանները շարած... Հոս է, որ մեր մանուկները հանգիստ ու հարազատ ձեռքերու մէջ խաղցած են, ու տակաւին կը խաղան ու կը մեծնան... Տարիներէ ի վեր այսպէս է կարգը. սրահին միջոցառումը բոլորիս միջոցառումը կ'ըլլայ. բոլորը կը գործեն՝ վարչութիւն, տիկնանց, երիտասարդներ եւ անշուշտ՝ սիրայօժար մասնակիցներ:

Ահա այս ամէնուն, ամէնուս ուրախութիւնն է, որ 75 տարի անց, դալարագեղ մեր պարտէզը,

շողշողուն «Կենաց պարը», Հայ Տանիքն ու մտերմիկ մեր «Թէքէեան Սրահը» այսօր կ'ամբողջանան այս հրաշագեղ, արդիական սրահով, որ աւելի արժեքաւորուեցաւ Աշոտ Զօրեանի այս հիասքանչ արուեստի գործով, որ այսօր կը զարդարէ մեր բեմը, ինչպէս ժամանակին զարդարած էր Գեղարուեստասիրաց Միութեան Սրահը: Զօրեան, 1966 թուականին, հրապուրուելով Գահիրէի մէջ Հայաստանի Երգի Պարի Անսամպլին ելոյթէն, նկարեց այս աննախադէպ ստեղծագործութիւնը եւ զայն կոչեց «Հայ Պարուհիներ»:

Պանծալի մեր 75-ամեակի հպարտութիւնը այս առիթով կը բազմապատկուի, բայց իբրեւ սրահիս 13 տարուան վարչական, կարծեմ ինծի հետ շատեր կը համաձայնին, թէ մեզ հաւաքող արդի սրահ մը ունենալը բոլորիս համար հարստութիւն է այսօր. բայց եկէք ընդունինք, որ մեզմով ու նամանաւանդ մեր երիտասարդներուն ու մանուկներուն ներկայութեամբ է, որ այս հարստութիւնը կ'իմաստաւորուի, կ'արժեւորուի, կը շարունակուի եւ ամենակարեւորը՝ կը ժառանգուի: Սէր ու գուրգուրանքով պահպանուած ու մեզի

յանձնուածը, ոչ միայն պէտք է պահել, այլեւ՝ ապրեցնել եւ արժանապատուօրէն փոխանցել մեզի յաջորդողներուն:

Այս վերանորոգուած սրահը մեզի հնարաւորութիւն պիտի տայ կրկնապատկելու մեր գործունէութիւնը եւ էական առիթ մը պիտի հանդիսանայ կազմակերպելու նորաշունչ միջոցառումներ, մշակութային ձեռնարկներ, գրական, երաժշտական ու գեղարուեստի երեկոններ, որոնց մէջ ուղղակիօրէն պիտի ներգրաւուին մեր երիտասարդները: Պիտի ջանանք, որ այս երդիքին տակ հաւաքուին մեր տղաքը, մտածեն, արարեն ու ծրագրեն, փորձառութիւն ու յուշ կուտակեն եւ իրագործեն իրենց արդի ծրագիրներն ու երազանքները...

Այսօր հպարտութեամբ կրնամ յայտարարել, որ ձեւաւորողը այս գեղեցիկ սրահին, ուր այժմ հաւաքուած ենք, հայրենակիցս Սաթօ Աբգարեանն է, որուն մեր մէջ ունենալու ուրախութիւնը միշտ վայելած ենք, բայց կրկնակի կը վայելենք այսօր: Իմ եւ հաւանաբար բոլորիս կարծիքով, անոր արուեստը պարզ, գործնական, արդի, ճաշակաւոր, սրտի մօտ ու գեղեցիկ է: Բոլորիս վկայութեամբ, վերջին ամիսներուն գիշերը ցերեկին խառնած, ան գերազանցօրէն իրագործեց իրեն վստահուած պարտականութիւնը:

Վարձքդ կատար Սաթօ:

Խօսելով մեր այսօրուան նուաճումներ-

րուն եւ երազանքներուն մասին, անհրաժեշտ կը նկատեմ վարչութեանս անունով երախտիքի անկեղծ խօսք ուղղել Կոկանեան Սրահի նախկին բոլոր վարչութիւններուն, ներկայ թէ՛ բացակայ անխտիր, բոլոր անդամներուն եւ յարգարժանատենապետներուն, անոնց հետ գործող բոլոր յանձնախումբերու նուիրեալ անդամներուն եւ շնորհաւորել զիրենք:

Երախտիքի մեր խօսքը կ'ուղղենք Կոկանեան Սրահին սատարող եւ անոր թեւ ու թիկունք կանգնող Հայ Ազգային Հիմնադրամին եւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան: Եւ անշուշտ սրտագին մեր շնորհակալութիւնը կը յայտնենք Գերշ. Տ. Աշոտ Ս. Մնացականեանի գլխաւորութեամբ՝ Գահիրէի Ազգային Առաջնորդարանին, որուն մեծաշուք հովանիին տակ գործած ու յաջողած ենք միշտ, այսօր՝ այստեղ ենք ու վաղը՝ կը շարունակենք:

Փառք ու պատիւ Կոկանեան Սրահին ճրագը վառ պահողներուն, ոյժ եւ կորով ու կանաչ ճանապարհ այսօր շարունակողներուն:

Նորանոր ամեակներ, հպարտալի բազում նուաճումներ պիտի մաղթեմ մեր սիրելի ակումբին՝ բոլորիս Կոկանեան Սրահին:

Լալա Շամամեան-Նիկոլեան

ՏՈՒՆ ԴԱՐՁ

Վերանորոգուած Կոկանեան Սրահը վերստացաւ Աշոտ Զօրեանի կարեւոր մէկ նկարը, որ Գեղարուեստասիրաց ակումբին մէջ կը գտնուէր եւ անոր փակումին հետ, պահ դրուէր էր Պըլըքտանեան սրահին մէջ:

Այժմ Զօրեանի այս շքեղ գեղանկարը կը զարդարէ վերանորոգուած Կոկանեան Սրահի բեմը, այլ փայլք մը տալով անոր:





ՀՊԱՐՏԱՌԻԹ ԶՈՅԳ ԱՄԵԱԿՆԵՐ

«Դժուար է ծառայել համայնքի մը, որուն մէջ գործող հաստատութիւնները քու տարիքէդ աւելի են՝ կրկնակի կամ եռակի, որովհետեւ ծելով մը ուսերուդ վրայ կը դնեն պատասխանատուութիւնը, պարտաւորութիւնն ու յանձնառութիւնը դարերով հոս հաստատուած եւ հայութեան կերտած ազգային կառոյցներուն: Նաեւ յանձնառութիւնն ու պարտաւորութիւնը կ'ունենաս անոնց ոչ թէ յիշատակը պահելու, այլ անոնց նպատակները շարունակական դարձնելու, շուրջդ ունենալով մարդիկ, որոնք համոզուած են եւ հաւատարիմ իրենց նախորդներուն սկզբունքներուն, որոնք պայմաններուն համեմատ, հակառակ եղած դժուարութիւններուն կամ երբեմն ցաւոտ որոշումներու, առաջ կ'ընթանան: Ամենակարեւորը՝ անոնք կը փորձեն միշտ նպատակէն չշեղիլ: Այսօր, այս բեմէն լսուած արտասանութիւնները, երգերն ու պարերը ապացոյց են, որ այդ կառոյցներուն գոյութիւնը ոչ միայն կը պահուի, այլ հիմք ունի տակաւին շարունակութիւն ունենալու: Այս առումով երախտապարտ ենք եւ պէտք է միշտ խոնարհաբար յիշենք անունները մեր մեծ բարերարներուն, որոնց նուիրատուութիւնը հող, շէնք կամ դրամ ըլլալէ

աւելի, սուրբ եւ ազնիւ գաղափար էր, զոր պէտք է համոզումով պահել»:

Այս խօսքերով է, որ եգիպտահայ թեմի բարեջան Առաջնորդ Տ. Աշոտ Եպս. Մնացականեան փակեց Գալուստեան-Նուպարեան Ազգային Վարժարանի շրջանաւարտից հերթական հանդէսը, որ սակայն այս անգամ այլ խորք ունէր, միաժամանակ ըլլալով տօնակատարութիւնը Գալուստեան Ազգային Վարժարանի 170-ամեակին եւ Նուպարեան Ազգային Վարժարանի 100-ամեակին:

Իսկապէ՛ս, ինչպէս ըսաւ ներկայի տնօրէն Սիմոն Չամբերթեան իր խօսքին մէջ, երբ այլ գաղութներու մէջ հայկական դպրոցներ կը փակուին, կամ փակման վտանգին մէջ են, «մենք հպարտ ենք նման պատմութիւն ունեցող հաստատութեան մը մաս կազմելուն»:

Գահիրէի հայոց կեանքին մէջ այս երկու հաստատութիւնները կարելոր դեր ունեցած են եւ կը շարունակեն ունենալ - թէեւ 2013 թուականէն միացած որպէս մէկ հաստատութիւն - գաղութի տալով բազմաթիւ շրջանաւարտներ, որոնցմէ կարելոր թիւ մը հասած է յաջողութիւններու եւ տիրացած կարելոր պաշտօններու:

շար. էջ 13 →





ԵՐԿՈՒ ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Վերջերս Գահիրէի մէջ լոյս տեսաւ գրագէտ, Եգիպտոսի ՀԲԸՄիութեան Շրջանակային Յանձնաժողովի եւ Գահիրէի ՀԲԸՄի պատուոյ ատենապետ տիար Պերճ Թէրզեանի հերթական գիրքը, որ կը կրէ «Դոկտ. Աւետիս Եափուճեանի Երկու Գրախօսականները Պերճ Թէրզեանի Երկու Գիրքերուն Մասին» խորագիրը:

Դոկտ. Աւետիս Եափուճեան ծնած է Գահիրէ 1931-ին եւ մահացած Սիտնի 2017-ին: Եղած է փոխ խմբագիրը «Արեւ» օրաթերթին (այսօր շաբաթաթերթ), 1965-1967 շրջանին, ապա անոր խմբագիրը, 1967-1990:

Հատորը, որ կը բաղկանայ միջին չափի 42 էջերէ, կ'անդրադառնայ Պերճ Թէրզեանի երկու գիրքերուն՝ «Ինչպէ՞ս Տօնուեցաւ Հայ Պարբերական Մամուլի 200-ամեակը Գահիրէի Մէջ»-ին (2004 Գահիրէ) եւ «Յետադարձ Անդրադարձ»-ին (2010 Գահիրէ), որուն համար Ա. Եափուճեան «պատմաբանական» եզրը կ'օգտագործէ:

Թերեւս անսովոր թուի արդէն լոյս տեսած գրախօսականներ կրկին հրատարակելը, մանաւանդ առանձին գիրքով:

Սակայն նկատի առնելով, որ դոկտ. Ա. Եափուճեան իր այս երկու գրախօսականները հրատարակած էր Աւստրալիոյ «Միութիւն» հանդէսին մէջ, եւ թէ այդ հանդէսը դժուար հասանելի է այստեղ, կ'արդարանայ անոնց հրատարակութիւնը առանձին գիրքով, մանաւանդ անոնց ունեցած լայն անդրադարձին համար ո՛չ միայն գրախօսուած գիրքին, այլ նաեւ ու մանաւանդ անոր ընդմէջէն եգիպտահայ գաղութի ա՛յդ օրերու կեանքին (1970-ականներ):

Ա. Եափուճեան իր գրախօսականներուն մէջ կ'անդրադառնայ Պ. Թէրզեանի գիրքերուն մէջ արծարծուած հարցերուն, միաժամանակ ամբողջացնելով մանրամասնութիւնները, որոնց գումարը կը կազմէ եգիպտահայ գաղութին նորօրեայ պատմութիւնը:

Կը շնորհաւորենք տիար Պ. Թէրզեան այս նոր հրատարակութեան առիթով եւ առողջութիւն կը մաղթենք իրեն, շարունակելու իր այս պատասխանատու աշխատանքը՝ արձանագրութիւնը եգիպտահայ գաղութին նորօրեայ պատմութեան:

← շար. էջ 12-էն

ՀՊԱՐՏԱՌԻԹ ԶՈՅԳ ԱՄԵԱԿՆԵՐ

Այս պանծալի զոյգ ամեակներուն առիթով, գեղարուեստական գեղեցիկ եւ բազմաթիւ յայտագրէ մը ետք, զոր դպրոցին աշակերտները գործադրեցին իրենց հայերէնի ուսուցչուհիներուն եւ դպրոցին խմբավար մօ. Միհրան եւ տիկ. Գոհար Ղազէլեաններուն ղեկավարութեամբ, պարգեւատրում մը կատարուեցաւ դպրոցին նախկին եւ ներկայ տնօրէններուն, գնահատելով անոնց ինքնանուէր աշխատանքը:

Գեղեցիկ վահանակներով պարգեւատրուեցան տիկիններ Ալիս Ճիզմէճեան, տոքթ. Հերմինէ Վարժապետեան, Անի Կապէան, Դոկտ. Վարուժան Գազանճեան (կը բացակայէր) եւ տեարք Մարտիկ Պալեան եւ Սիմոն Չամբէրթէնեան:

Հանդիսութեան ընթացքին երկու տեսերիզներ ցուցադրուեցան, մին դպրոցին պատմութիւնը ներկայացնող, իսկ միւսը լուսանկարներով կը պատմէր 2023-2024 դպրոցական տարեշրջանի ինը շրջանաւարտներուն դպրոց անցուցած կեանքը, մանկապարտէզէն մինչեւ երկրորդականի վերջին դասարան:

Պրըքտանեան սրահը այդ օր՝ Ուրբաթ, 13 Դեկտեմբեր 2024-ի երեկոյեան լեցուն էր խոտներամ բազմութեամբ մը, որ եկած էր վայելելու Գալուստեան-Նուպարեան Ազգային վարժարանի աշակերտներուն ներկայացուցած գեղարուեստական յայտագիրն ու հպարտօրէն նշելու շրջանաւարտներուն յաջողութիւնը:



47 տարիներէ ի վեր անխափան ընթացող արուեստի այս ցուցահանդէսին հերթական ցուցադրութեան բացումը կատարուեցաւ Հելիոպոլսոյ Մարզական Ակումբէն ներս, Կիրակի, 19 Յունւար 2025-ի երեկոյեան:

Ցուցադրութեան կը մասնակցէին 46 արուեստագէտ-արուեստագիտուհիներ՝ գեղանկարներով, քանդակով եւ առաջին անգամ ըլլալով՝ զարդեղէնի ձեւադրութեամբ:

47 տարիներէ ի վեր (1978-էն) ընթացող ցուցադրութեան վերջին տասնամեակ մը տարիներուն ետին, որպէս կազմակերպիչ, կը կենայ գեղանկարչուհի Էսմերալտա Հատտատ:

Հակառակ անոր, որ Գահիրէի մէջ կան քանի մը հայ արհեստավարժ նկարիչներ, սակայն անոնցմէ միայն մէկը՝ գեղանկարիչ Վահէ Վարժապետեանն է, որ կը մասնակցի այս ցուցահանդէսին, արդէն 7րդ անգամը ըլլալով:

Վարժապետեան մասնակցած էր մէկ գեղանկարով:

Փոքրիկ եւ անպաշտօն զրոյցի մը ընթացքին Վարժապետեան մեզ տեղեակ պահեց, թէ ցուցահանդէսին մասնակցող բոլոր արուեստագէտները չեն որ արհեստավարժ են, կամ գեղարուեստական ուսում ունին. կան նաեւ երիտասարդ եւ սկսնակ տղաք, որոնց ներկայութիւնը «յոյս կը ներշնչէ արուեստի ապագային նկատմամբ», ինչպէս իր բացման խօսքին մէջ ըսաւ արուեստագէտներու սենտիքային նախագահ՝ Թարէք Էլ Քոմի:

Իսկ թէ ինչպէ՞ս կ'ընտրուին մասնակիցներն ու անոնց գործերը՝ «ըստ կազմակերպչուհիին հայեցողութեան», ըսաւ Վար-



ժապետեան:

Բացումին ներկայ էր նաեւ Հելիոպոլիս Մարզական Ակումբի տնօրէն Ամրը Էլ Սունպաթին, որ բարի գալուստ մաղթեց բազմաթիւ ներկաներուն, որոնք եկեր էին վայելելու ցուցադրուած գործերը, որոնք սակայն այս տարի այլ տարիներէ նուազ գրաւիչ էին կամ նորարարութեամբ փայլող:

Քանի մը գործեր էին միայն, որոնք իրենց թեքնիքով,

գոյներու մասնագիտական օգտագործումով, միաժամանակ յոյզի թաթաւուն ներկայութեամբ կը գրաւէին ակնդիրները:

Արուեստագէտներու Սէնտիքային տնօրէնը խորապէս գնահատեց եւ դրուատանքով խօսեցաւ Վահէ Վարժապետեանի գեղանկարին մասին, ուր գոյներու սքանչելի օգտագործումը կ'արթնցնէր եգիպտոսի թէժ արեւուն տակ փայլք տուող Նեղոսին վրայ ծփացող նաւերն ու եգիպտական բնութիւնը:

«Կարմիրին իմաստուն օգտագործումը իրապէ՛ս այլ խորք տուեր է ձեր նկարին», ըսաւ Նախագահը:

Հօր վրձնահարուածներով եւ վտանգաւոր գոյներու տիրապետումով՝ մանիշագոյն-դեղին եւ կարմիր, Վարժապետեանի գեղանկարը այն քանի մը նկարներէն էր, որոնք կը տարբերէին մնացեալներէն:

Կը շնորհաւորենք Վահէ Վարժապետեանը իր արուեստին եւ երկրին արուեստի բնանկարին վրայ իր մշտական ներկայութեան համար, եւ կը մաղթենք որ վրձինը շարունակէ արարել երկրին բնութենէն ներշնչուած գեղեցիկը:

Ցուցահանդէսը բաց էր մինչեւ 1 Փետրուար 2025:





ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

2025 թուականի Յունուար 6-ին շաբաթը սկսած անտառային անզուսպ հրդեհները ճգնաժամի մէջ ձգեր են Մեծն Լոս Անճէլըսի շրջանի տասնեակ հազարաւոր բնակիչները: Պատմութեան մէջ ամենասարսափելի աւերածութիւններու շարքին կը դասուի Գալիֆորնիա նահանգի այս համատարած հրդեհը, ուր Միացեալ Նահանգներու հայ բնակչութեան ամենամեծ թիւը կը գտնուի, որ երկրորդն է աշխարհի տարածքին: Ազգը եւ աշխարհը ցընցըած եւ հիասթափուած կը հետեւին, թէ ինչպէս կրակը կը տարածուի, իր ետին անսահման աւերածութիւն ձգելով: Հսկայական տարածքներ, տուներ, աշխատատեղեր, ինքնաշարժներ, դպրոցներ եւ հանրային ենթակառոցներ կը փճանան, ամայութեան վերածելով ԱՄՆի ամենէն եռանդուն եւ խճողուած քաղաքներէն մէկը:

Ամերիկեան Կարմիր Խաչին եւ Համաշխարհային Կեդրոնական Խոհանոցին միջեւ հաւասարապէս բաշխուած 100,000 տոլար նուիրատութեամբ, ՀԲԸՄիութեան ղեկավարութիւնը եւ անոր համաշխարհային անդամները կարեկից են Լոս Անճէլըսի ժողովուրդին եւ հայ ընտանիքներուն հետ, որոնք հսկայական կորուստներ ունին եւ անորոշ ապագայի մը առջեւ են:

Կազմակերպութեան անունով ըրած յայտարարութեան մէջ ՀԲԸՄ նախագահ Սէմ Սիմոնեան արտայայտեց մտահոգութեան եւ կարեկցանքի զգացումներ, զորս աշխարհասփիւռ հայութիւնը կը զգայ Լոս Անճէլըսի մեր հայրենակիցներուն հանդէպ: ՀԲԸՄիութիւնը կը լարէ իր քանքերը, զանոնք ներդաշնակելով տեղական միջոցներու հետ, օգնելու համար մեր հայրենակիցներուն:

«Մենք արդէն 50,000 ԱՄՆ տոլար յատկացուցեր ենք Ամերիկեան Կարմիր Խաչին եւ 50,000 ԱՄՆ տոլար՝ Համաշխարհային Կեդրոնական Խոհանոցին, աջակցելու շտապ օգնութեան աշխատանքներուն, որոնք ընթացքի մէջ են: Միաժամանակ, ՀԲԸՄ Կեդրոնական Վարչութիւնը սերտօրէն կը գործակցի ՀԲԸՄի Արեւմտեան շրջանի ղեկավարութեան եւ անոր բազմաթիւ կամաւոր յանձնախումբերուն հետ, կարիքաւորներուն մարդասիրական օգնութիւն տրամադրելու համար» ըսաւ Նախագահը:

Լրացուցիչ տեղեկութիւններ կը հաղորդուին յառաջիկայ օրերուն:

← շար. էջ 9-էն

ԲԱՑՈՒՄ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ ԿՈԿԱՆԵԱՆ ՍՐԱՀԻ

լուսանկարներու հաւաքածոն, որ կը ներկայացնէր անցնող 75 տարիներու ատենապետները, վարչական կազմերը, երիտասարդական յանձնախումբերը, Կոկանեան Սրահի շինութիւնը, գործունէութիւնը՝ Զանգեզուր պարախումբի ելոյթները, Սրահին կազմակերպած թատրերգութիւնները եւ այլ պատմական ձեռնարկներ: Իրապէս ճոխ եւ հարուստ հաւաքածոյ մը, որ կը խտացնէր Կոկանեան Սրահի անցած 75

տարիներու պատմական ճամբան եւ աւելի ազդեցիկ էր, քան պատմութեան գիրք մը:

Ներկաները երկար յամեցան սրահին մէջ, որուն տաքուկ մթնոլորտը կը պահէր գիրենք, եւ տուն գացին իրենց հետ տանելով Սրահին մակնիշը կրող տակդիրները, որոնք նուիրուած էին իւրաքանչիւր հիւրի սրահ մուտքին, հայկական տարազով հիւրերը դիմաւորող չորս պարմանուիներուն ձեռքով:



ՀԱՅԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

Յայտնի է, որ անյիշելի ժամանակներէն հայերը հաստատուած են Եգիպտոս:

Անժխտելի է նաեւ, որ հայերը, ինչ երկրի մէջ ալ հաստատուած են, ցոյց տուած են ձիրքեր եւ կարողութիւններ: Հաւատարիմ եղած են այն երկրին, որ ապաստան տուած է հայրենագուրկ մարդոց: Յարատեւելով Եգիպտոսի հիւրընկալ հողին վրայ, հայերը անմասն չմնացին երկրի կեանքէն՝ գիտութեան, մշակոյթի, արհեստներու թէ արուեստներու շրջանակէն ներս: Տարիներ քով քովի ապրելով բարեկամական մեծ սիրով, հայ մարդը ինքզինք տեղացի նկատած է: Սակայն հոս բայց մը կայ, որ կը տարանջատէ երկու բարեկամ ժողովուրդները: Մենք, որպէս եկուորներ, բաւական ծանօթ ենք եգիպտացիներու պատմութեան եւ մշակոյթին, սակայն եգիպտացիները տեղեակ չեն մեր ո՛չ պատմութեան, ո՛չ մշակոյթին... Եթէ մեր աշակերտները եւ ուսանողները, դպրոցի եւ համալսարանի մէջ ընդհանուր ծանօթութիւն ստացած են Եգիպտոսի պատմութեան եւ մշակոյթին մասին, եգիպտացիները հայ ժողովուրդի պատմութեան ու մշակոյթին, անցեալին ու ներկային մասին բնաւ գաղափար չունին: Գուցէ այդ է պատճառը, որ Մահմուտ Սայիտի անուան թանգարանի տնօրէնուհի տիկ. Նօհա Եուսէֆը նախաձեռնեց այս ցուցադրութիւնը, որ աւելի կը մերձեցնէ երկու ժողովուրդները եւ ճանաչելու տայ զիրար:

Եգիպտոսի մէջ շատ օտարազգի փոքրամասնութիւններ կան, բայց քիչերը կրցան յարաբերիլ տեղացիներու մշակոյթին եւ արուեստին: Հայը այն ազգն է, որ երկար ատեն ապրելով Եգիպտոսի մէջ, չճշդութեամբ, հաւատարիմ մնաց իր արմատներուն, միեւնոյն ժամանակ անմասն չմնաց այս երկրի կեանքին, արհեստներուն, արուեստին, մշակոյթին: Երկրին մէջ ձեռնարկուած որեւէ ցուցադրութիւն՝ ըլլայ տարեկան, տօնական, թեմատիկ, մրցութային, անմասն չեն հայ արուեստագէտները:

Այսօրուան ցուցադրութեան թեման կերպարուեստն է: Նկարչութեան, արձանագործութեան, լուսանկարչութեան բազմաթիւ ստեղծագործութիւններ իրենց արժանի տեղերը գտած են թանգարանի շքեղ ցուցասրահներուն մէջ: Անշուշտ կան անուններ, որ վաղուց արդէն ծանօթ են հասարակութեան: Բաւ է ըսել Սարուխան, կամ Աշոտ Զօրեան, Համբար Համբարձումեան, որ անուանի նկարիչներու սերունդներ կրթած է նաեւ: Արուեստագէտներ, որոնք իրենց մտքին ու մատներուն հետքերն են թողած Եգիպտոսի մամուլին, թատրոններուն, եկեղեցիներուն մէջ: Վահէ Վարժապետեան, Սիմոն Շահրիկեան, Բիւզանդ Կոճամանեան, Օսնիկ Աւետիսեան... Անուններ անուններ՝ շատ են ու բազմազան:

Այս ցուցադրութեան պատուաւոր հիւրն էր վաղամեռիկ շնորհալի նկարիչ, արձանագործ Վահան Դելփեան: Վահանի պատկերները հետաքրքրական են, սակայն մտախոհ տխրութիւն մը կայ անոնց մէջ...

Ոչ ամենուն, բայց շատերու մասին խօսուեցաւ ցուցադրութիւնը նախորդող դասախօսութեան մէջ, ուր ելոյթ ունեցան արաբ արուեստասէր դոկտոր Մոհամէտ Ապու Էլ Ղար, հայ երգահան, երաժշտագէտ, արուեստաբան, նկարիչ՝ Հրանդ Քէշիշեան եւ ազատ ժուռնալիստ Թովմաս Կորկիսեան: Իրենց խօսքին մէջ նշեցին նաեւ մեր օրերու յաջողած արձանագործներ Արմէն Յակոբի (Իտալիա) եւ Սարգիս Թօսունեանի մասին: Անոնք շատ ցուցադրութիւններ ունեցած են Եգիպտոս, Իտալիա, Ֆրանսա, Չինաստան եւ այլ երկիրներու մէջ: Սարգիս Թօսունեանի ստեղծագործութիւններէն շատեր կը զարդարեն Գահիրէի օդակայանը, Գահիրէի կեդրոնական զբօսայգին, Աղեքսանդրիոյ գրադարանը...

Մեր արուեստագէտներուն բոլոր սերունդներուն ստեղծագործութիւններէն լաւագոյնները ընդգրկուած են Եգիպտոսի պետական թանգարաններուն մէջ՝

որպէս մնայուն նմոյշներ: Անհնար է իւրաքանչիւրին մասին առանձին խօսիլ, սակայն բոլորն ալ արժանի են ուշադրութեան ու գովասանքի: Արժանի են, քանզի արուեստագէտի մը համար դիւրին չէ ստեղծագործել օտար երկրի մը մէջ, որովհետեւ ստեղծագործող մը իր ոյժը կ'առնէ իր հարազատ միջավայրէն: Կ'ըսեն **հայրենիքի օղն ու ջուրն ալ ոյժ կու տան**: Խօսքիս ապացոյցը լուսանկարչական արուեստ ներկայացնող Նորա Քոլտեանը եւ Յովսէփ Օհանեանը ներկայացուցած են գեղեցիկ, պատմական կտորներ

հայրենիքէն եւ մեր յաւերժական Արարատը:

Յուցադրութիւնը բաց է մէկ ամիս: Այդ ընթացքին որքա՞ն մարդիկ պիտի ծանօթանան հայոց ազգին, մեր մշակոյթին...

Մարդ կայ, որուն ազգը զինք կը ներկայացնէ, մարդ ալ կայ, որ ինք կը ներկայացնէ իր ազգը: Տայ Աստուած, որ մեր արուեստագէտները այս անգամ ալ լաւ ներկայացնեն մեր ազգը:

**Անժիկ Յակոբեան-Կանիմեան
Աղեքսանդրիա**





ՎԿԱՅԱԳՐԵՐՈՒ ՅԱՆՁՆՈՒՄ

Եգիպտոսի ՀԲԸՄԻ Երիտասարդ Մասնագետներու խմբակը կազմակերպած էր «Ապագայ» սեմինարներու շարքի երկրորդ փուլը՝ The Art of Editing and Photo-manipulation With Photoshop խորագիրով, որ տեղի ունեցած էր 13-27 Սեպտեմբերին:

Շաբաթ, 2 Նոյեմբեր 2024-ի երեկոյեան այս դասընթացքին հետեւող 11 աշակերտներուն վկայագրերը յանձնելու ձեռնարկ մը տեղի ունեցաւ Ս. Չագըր սրահէն ներս, ուր հաւաքուեր էին մասնակցողներուն ծնողներն ու կարգ մը վարչականներ:

Բացման խօսքին մէջ դասընթացքը վարող Ասփէ Ճիզմէճեան-Կապէեան հետաքրքրական բան մը ըսաւ, ներկաներուն բարի գալուստ մաղթելէն ետք:

«Ես համալսարանական ուսանող էի, երբ ծանօթացայ այս ծրագրին. դուք բախտաւոր էք, որ տակաւին պատանի, կը ծանօթանաք անոր, եւ յոյսով եմ՝ նաեւ պիտի հմտանաք այս ժամանակակից «արուեստ»ին»:

Մասնակցող աշակերտներն էին (անուններու այբբենական կարգով).

Անոյշ Թորիկեան, Ալեքսան Նորարեան, Գարլի Րաֆիք, Շանթալ Լապիպ, Հուրիկ Կապէեան, Լուսին Լուսարարեան, Մարալ Մանուկեան, Րաֆայէլ Էլ Մասրի, Րուպինա Ասլանեան-Նորարեան, Սարին Լուսարարեան, Եւա Գասպարեան:

Ցուցադրուած էին մասնակիցներուն վերջին աշխատանքները, որոնց նիւթն էր «Եգիպտահայը»: Ցուցադրուած բոլոր աշխատանքները կ'արտայայտէին մասնակիցներուն երկու երկիրներուն՝ Եգիպտոսի եւ Հայաստանի հանդէպ ունեցած սէրն ու հպարտութիւնը:

Վերջին վկայագիր մըն ալ՝ «Գնահատանքի վկայագիր» յանձնուեցաւ Նաթալի Կոտողշեանին, որ դասընթացքին ամբողջ տեւողութեան սիրայօժար կերպով օգնած էր Ասփէ Ճիզմէճեան-Կապէեանին, դառնալով անոր աջ բազուկը:

Մասնակից պատանիները իրապէ՛ս հպարտ էին իրենց աշխատանքով, ուրախ էին եւ կարծես անհամբեր կը սպասէին այս ծրագրին յաջորդ հանգրուանին:

Հաւաքը վերջ գտաւ մտերմիկ հիւրասիրութեամբ մը:





ԲԺԻՇԿ ՄԱՏԵՆԱԳԻՐ

Բազմիցս լսած ենք բժիշկ-երաժիշտ, բժիշկ-գծագրող, բժիշկ-արձանագործ, բժիշկ-բանաստեղծ...

Սակայն բժիշկ-մատենագէտ-համա-կարգող... Դիւրին չէ գտնել:

Մենք կը ծնինք, աշխարհ կու գանք, չենք գիտեր թէ ի՞նչ առաքելութիւն ունինք: Կեանքը մեզի ա՛յլ ճամբայ կ'առաջարկէ: Մեր ապրած կեանքը եւ միջա-վայրը կը թելադրեն իրենց պայմանները: Որչափ ալ որ ապրինք կեանքի թելադ-րանքով, միեւնոյնն է, ի վերուստ տրուա-ծը ձեռով մը կը ճառագէ տեղէ մը: Հան-րածանօթ մեծ արձանագործ Երուանդ Քոչար, որ հեղինակն է «Սասունցի Դա-ւիթ», «Վարդան Մամիկոնեան» եւ այլ հրաշալի ստեղծագործութիւններու, այս առթիւ ըսած է. **«Մարդը կը ծնի իր անա-ւարտ դէմքով ու բնաւորութեամբ: Սա-կայն անոր ապրելակերպը, գիտակցու-թիւնը կը յղկեն ու կը լրացնեն անա-րտուն պատկերը»:**

Բազմաթիւ իմաստուն խօսքեր կան մարդ արարածին մասնագիտութեան եւ առաքելութեան մասին: Սակայն տոքթ. Սուրէն Պայրամեանի ծաւալուն հատոր-ները աչքիս առաջ ունենալով, անմիջա-պէս յիշեցի մեծն Քոչարին խօսքերը:

Մարդը, բժիշկ ըլլալով, իր անգնահա-տելի ժամանակը տրամադրած է բանա-սիրական աշխատանքի եւ լոյս աշխարհ բերած շատ օգտակար գիրքեր: Այս հա-տորները հաւաքական ժողովածոներ են, ժամանակի եւ պատմութեան ծալքերուն խորքերէն հանուած փաստերու եւ իրա-դարձութիւններու: Շնորհակալ եւ օգտա-կար աշխատութիւն եգիպտահայ հա-մայնքին եւ ընդհանրապէս ոեւէ հայու թէ ոչ հայու համար, որ հետաքրքրուած է մեր ժողովուրդին, կամ գաղութին պատ-մութեամբ:

Վերջերս, առիթով մը, մտովին պտոյտ մը ըրի եգիպտահայութեան պատմական անցեալին եւ խճուեցայ պատմութեան խաչմերուկներուն մէջ: Շուարած, մոլո-

րած վիճակի մէջ, ձեռքս առի տոքթ. Պայ-րամեանի «Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ» ժողովածոն: Գիրքը լուսարձակի մը պէս լուսաւորեց եւ պարզաբանեց բոլոր տարակոյսներս: Պատմականը ընողներ կան եւ վատ չեն ըրած, սակայն ճշգրիտ թիւ կամ օր նշուած է միայն այստե՛ղ: Հե-ղինակը փաստերու ճշգրտութեամբ հա-ւաքած եւ ներկայացուցած է իւրաքան-չիւր իրադարձութիւն, կամ եղելութիւն եգիպտահայ կառոյցներուն եւ մամուլին մասին, եւ ոչ միայն: Ով գիտէ ո՞ր փաս-տին, կամ ո՞ր տեղեկութեան փնտռտուքը առիթ հանդիսացաւ այս հատորներու ստեղծումին: Դիւրին չէ 140 եւ ւաւելի տա-րիներու խորքերէն յայտնաբերել պարբե-րականի մը անունը, կամ ազդօրինակը, առաջին թիւը, հրատարակութեան վայ-րը, տեւողութիւնը, էջերու թիւը, նոյնիսկ չափերը: Կը կարծեմ թէ տարիներու ման-րակրկիտ աշխատանքի եւ նուիրումի արգասիք են այս հատորները:

Ոչ պակաս ճշգրիտ փաստերու ժողո-վածոյ մըն է «Հայկական Համայնքային Կառոյցները Եգիպտոսի մէջ» հատորը: Այս տեղեկատուական ձեռնարկը ո՛չ մի-այն պարզ փաստեր կը տեղեկացնէ, այլ կու տայ նաեւ կառոյցին ստեղծման նպա-տակը, ընթացքը եւ հետագայ գործունէ-ութիւնը: Յաճախ կը կարդանք այսպիսի տողեր՝ **«Վարժարանին նպատակը եղած է... Վարժարանը բոլորած է հա-զիւ մէկ տարի եւ փակուած է... Այս շրջա-նին տպարանը յիշուած է նաեւ իբրեւ «Տպարան-վիմագրապուն ոսկեպառ» անունով»:** Պարզ փաստերու հետ կը տեղեկանանք ժամանակի այլ դէպքերու եւ դէմքերու նաեւ: Յայտնի կ'ըլլայ կառոյ-ցին անուանումին, կամ անոր փոփոխու-թեան պատճառները՝ **«...Նորակառոյց կրթական յարկին բացումը կատարուած է Կիրակի, 25 Մայիս 1929-ին, եւ Առաջ-նորդ Թորգոմ Սրբազանի յայտարարու-թեամբ կոչուած է «Մելգոնեան մանկա-պարտէզ», առ ի երախտագիտութիւն**

շար. էջ 20 ➔



ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Կեդրոնս ընդունեց «Հայագիտական Հետազոտություններու Աջակցության եւ Զարգացման Հիմնադրամի «Անի» կեդրոնի երեք պատասխանատուներ, Հինգաշբթի, 30 Յունուար 2025-ի երեկոյեան:

Արմէն Խելչոյեան՝ Հիմնադրամի տնօրէն, դոկտ. Արթուր Սողոմոնեան եւ դոկտ. Տիմիթրի Սելուրժ հիւրաբար այցելեցին ՀԲԸՄի Հելիոպոլսոյ (Գահիրէ) կեդրոնը, ընկերակցութեամբ ՀԲԸՄի Գահիրէի Մասնաճիւղի ատենապետ դոկտ. Ճորճ Սիմոնեանի եւ Րաֆֆի Չէչճէեանի: Հիւրերը ծանօթացան Միութեանս աշխատանքներուն, գրադարանին եւ արխիւասրահին:

Հիւրերը ՀԲԸՄի Երուսաղէմի Գ. Աղաթօն գրադարանին նուիրեցին «Ծովակալ Իսաքով» մենագրութիւնը, սքանչելի մատեան մը նուիրուած Սովետական Միութեան հերոս հայազգի այս նշանաւոր ծո-



վակալին, որուն համար ըսուած է՝ «անծով երկրի մէջ ծնած հսկայ ծովակալը»: Աշխատանքը նուիրուած է Իսաքովի ծննդեան 130-ամեակին:

Հատորը բաժնուած է չորս գլխաւոր գլուխներու՝ Ա. Իսաքովի ծննդեան եւ ծննդավայրին՝ Հաճիշէնի (Ելիզավետպոլի գաւառ, Ելիզավետպոլի նահանգ), Բ. 1920-1940 թուականներ, Գ. Իսաքովի գործունէութիւնը, Դ. Իսաքովի յետ-պատերազմեան գործունէութիւնը, որպէս ՍՍՀՄ Պաշտպանութեան Նախարարութեան կառոյցներու ղեկավար:

Հատորը մեծ չափի է եւ կը հաշուէ 383 էջ. հարուստ է պատմական բազմաթիւ լուսանկարներով, արխիւներու պատճեններով եւ քարտէզներով:

Հիւրերը որպէս նուէր ստացան մեր Միութեան հրատարակութիւններէն աւելի քան տասնեակ մը հատորներ:

← շար. էջ 19-էն

ԲԺԻՇԿ ՄԱՏԵՆԱԳԻՐ

բարերար Կարապետ Մելգոնեանի». այս ոչ մեծ նախադասութիւնը մեզի կը տեղեկացնէ, թէ մանկապարտէզ մը բացուած է, թէ շէնքը նորակառոյց է, թէ այդ պահուն համայնքին Առաջնորդը Թորգոմ Սրբազանն էր, մանկապարտէզին բարերարը՝ Կարապետ Մելգոնեանը: Նոյնիսկ կը տեղեկանանք, թէ 1929-ի Մայիս 25-ը Կիրակի օր էր: Եւ պարզ փաստերը կը դառնան աւելի ընդգրկուն եւ ամբողջական: Ոչ մասնագէտ ըլլալով, տոքթ. Պայրամեանը կրնար արձանագրել սոսկ թիւերը եւ կառոյցներու անունները: Սակայն տոքթորը բարձրակարգ մատենագրի բժախնդրութեամբ է կատարած իր գործը: Ան որ գիտէ թէ ի՞նչ ըսել է մատենագիտութիւն եւ մատենագիտական աշխա-

տանք, կրնայ հասկնալ եւ երեւակայել աշխատանքի մեծութիւնն ու բոլոր բարդութիւնները: Եւ մասնագիտութեամբ բժիշկ, ո՛չ մատենագէտ տոքթ. Պայրամեանը անասելի բարդ աշխատանք կատարած է, լոյս աշխարհ բերելով «Հայ Մամուլը Եգիպտոսի Մէջ» եւ «Հայկական Համայնքային Կառոյցները Եգիպտոսի Մէջ» մատենագիտական հատորները:

Անվերջ կրնանք խօսիլ այս ծաւալուն գիրքերուն մասին, սակայն կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել տոքթ. Սուրէն Պայրամեանին, իր կատարած այս շատ արժէքաւոր աշխատանքին համար:

**Անժիկ Յակոբեան-Կանիմեան
Աղեքսանդրիա**



«ԾԻԱԾԱՆ»ԱԳՈՅՆ ՔՍԱՆԱՄԵԱԿ ՄԸ

Այնպես ինչպես գետի մը ջուրերը կը փոխուին, մինչ գետը անփոփոխ կը մնայ, այդպես է նաեւ Գահիրէի ՀԲԸՄիութեան Տեղական Մասնաճիւղի մանկապատանեկան «Ծիածան» երգչախումբը, որուն քսանամեայ ճանապարհին ընթացքին բազմաթիւ փոքրիկներ մասնակցեր են, մինչ երգչախումբը մնացեր է նոյն գունագեղ եւ հաճելի երեւոյթը:

Մօ. Միհրան Ղազէլեանի եւ իր ազնիւ տիկնոջ՝ Գոհար Ղազէլեանի խմբավարութեամբ, «Ծիածան» երգչախումբը իր քսանամեակը տօնեց Գահիրէի օփերայի տան փոքր դահլիճին մէջ, 8 Դեկտեմբեր 2024-ի երեկոյեան, երկու ժամերու ընթացքին խանդավառելով ներկաները՝ ծնողք թէ բարեկամներ, որոնք իրենց բուն ծափահարութիւններով քաջալերեցին փոքրերը եւ գնահատեցին երաժշտագէտ ամուլին ջանքերը:

Երեկոն բացուեցաւ Եգիպտոսի, Հայաստանի եւ ՀԲԸՄիութեան քայլերգներով, որոնցմէ ետք կարճ տեսերիզ մը ցոյց տուաւ «Ծիածան»ի անցած ճանապարհը: Տիար Պերճ Թէրզեան, որպէս Եգիպտոսի ՀԲԸՄիութեան Շրջանակային Յանձնաժողովի եւ Գահիրէի Տեղական Մասնաճիւղի պատուոյ ատենապետ, իր սրտի խօսքը ըսաւ նոյն տեսերիզին ընդմէջէն, արագ ակնարկ մը նետեց «Ծիածան»ի ծնունդին վրայ եւ գնահատեց այս գեղեցիկ երեւոյթը:

Փոքրերը քսան երգերու եւ երբեմն անոնց ընկերացող պարերու իրենց առոյգ եւ հաճելի կատարումով խանդավառեցին ներկաները:

Հաճելի անակնկալ էր տեսնել «Ծիածան»ի ամենէն առաջին ելոյթին մասնակցած 16 հոգինոց խումբէն տասնեակ մը երիտասարդուհիներ, որոնք մասնակցեցան ելոյթին երկու երգերով, ինչպէս եւ անոնցմէ մէկ քանին փոխանցեցին իրենց յուշերն ու տպաւորութիւնները «Ծիածան»ի իրենց օրերէն:

Ելոյթը վերջ գտաւ «Ծիածան»ի քայլերգով, զոր երգեցին «Ծիածան»ի նախ-

կին եւ ներկայի սաները, եւ որուն խօսքերը գրեր է մօ. Միհրան Ղազէլեան, իսկ երաժշտութիւնը՝ Հայկաշոտ Աղասեան:

Աւարտին, ՀԲԸՄիութեան Տեղական Մասնաճիւղի ատենապետ դոկտոր Ճորճ Սիմոնեան ծաղկեփունջերով պատուեց խմբավարուհի տիկին Գոհար Ղազէլեանն ու պարուսոյց տիկին Սիւզի Գարգուրը, ապա ՀԲԸՄիութեան կողմէ արժաթագօծ երկու ափսէներով գնահատեց մօ. Միհրան Ղազէլեանին եւ Գոհար Ղազէլեանին քսանամեայ աշխատանքը: Յարգելի ատենապետը շնորհակալական խօսք ուղղեց նախ Եգիպտոսի, ուր ապահով կ'ապրին եւ իրենց մշակութային գործունէութիւնը կը ծաւալեն հայ համայնքին զաւակները, ապա անշուշտ Գահիրէի Օփերայի տան տնօրինութեան, մշակոյթի նախարարութեան եւ Սրբազան Առաջնորդ Հօր, որ «միշտ մեր կողքին է մեր մշակութային աշխատանքներուն որպէս սատարող»:

Դոկտոր Սիմոնեան յիշեց այն երեք անձերը, որոնք կարելոր ներդրում ունեցեր են «Ծիածան»ի ծննդոցին եւ հետագայ ընթացքին մէջ, երեքն ալ անժամանակ կերպով մեզմէ հեռացած՝ Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ Օննիկ Պըլքտանեան, Տեղական Մասնաճիւղի ատենապետ Վիգէն Ճիգմէճեան եւ դաշնակահարուհի Նանոր Աբիկեան. այս վերջինս երկար տարիներ եղած է «Ծիածան»ի դաշնակահարուհին: Յարգելի ատենապետը յիշեց նաեւ Գարուին Արսլանեանը, ինք եւս ողբացեալ եւ որուն զաւակները այսօր կը շարունակեն երգով սատարել գաղութի մշակութային կեանքին:

Շնորհակալական խօսքերու արժանացան նաեւ քուլիսներուն մէջ աշխատող երեք երիտասարդ տիկիններ՝ ՀԲԸՄի Տեղական Մասնաճիւղի վարչութեան անդամ եւ ելոյթին կազմակերպչական պատասխանատու տիկին Ռուպինա Ասլանեան-Նորարեւեանը, նոյն վարչութեան օժանդակ տիկիններ Նաթալի Ասլան-



եան-Լուսարարեանն ու Անի Պողոսեան-Թաշճեանը:

Ելոյթին յայտագիր-գրքոյկին մէջ (մօ. Մ. Ղազէլեան) կը կարդանք երգչախումբին ծննդոցը:

«Ծիածան» մանկական երգչախումբը ծնած է 15 Յունիս 2004-ին, Գահիրէի ՀԲԸՄի ընտանիքին մէջ:

Անոր գեղարուեստական դաստիարակութիւնը յանձնուեր է Միհրան եւ Գոհար Ղազէլեաններուն:

«Ծիածան» իր քսանմեակին ընթացքին ունեցեր է 43 ելոյթներ, որոնց մասնակցեր են 127 փոքրեր, երգելով 173 մեծ մասով մանկական երգեր:



64 ՏԱՐԻ ԱՌԱՋ



1961 թուականին Գահիրեի մէջ եգիպտահայ հոյլ մը արուեստագէտներ մասնակցեր են խմբային ցուցահանդէսի մը, որուն բացման հանդիսութեան ընթացքին է հաւանաբար, որ առնուած է այս խիստ շահեկան խմբանկարը.

Նստած ծախէն աջ.

Հրանդ Անդրանիկեան, Շուշան Էկոյեան եւ Ալեքսանդր Սարուխան.

Ոտքի ծախէն աջ.

Յակոբ Յակոբեան, Այծեմսիկ Պոյաճեան, Բիւզանդ Կոճամանեան, Ճօ Էգոյեան, Օնիկ Աւետիսեան, Շաքէ Ալպան (լուսանկարիչ), Նորա Իփէկեան, Աշոտ Զօրեան եւ Սիմոն Սամսոնեան:

ԿԱՂԱՆԴԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԳԱՀԻՐԷԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՄԷՋ

Ուրբաթ, 27 Դեկտեմբեր 2024ին Կաղանդ-Պապան ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ այցելեց: Օրը ճոխ էր Կաղանդի վերաբերեալ յայտագրով: Թէպէտ ակումբին գոց սրահը հիմնովին վերանորոգութեան մէջ է եւ տակաւին անգործածելի, սակայն Տիկնանց Յանձնախումբը կրցած էր Կաղանդի մթնոլորտ ստեղծել տօնածառը զետեղելով պզտիկներուն խաղավայրին կից ընդարձակ տարածութեան վրայ, կողքին Կաղանդ-Պապային աթոռով:

Օր. Արփի Ճանիկեանի հնչեցուցած Կաղանդի մեղեդիները գնահատուեցան ներկաներուն կողմէ: Շուտով հանդէս

եկաւ շատ սիրուած «Ծիածան» մանկապատանեկան երգչախումբը, խմբավարութեամբ տիկին Գոհար Ղազէլեանին:

Ժամանակը հասած էր որ Կաղանդ-Պապան մուտք գործէ ակումբէն ներս: Աւելի քան 80 մանուկներ ու փոքրիկներ դիմաւորեցին զինք եւ նուէրներ ստացան:

Հանդիսավարուի Տիկին Նայիրի Սիմոնեան, որ յաջող կերպով կազմակերպած էր օրը, անցաւ վիճակահանութեան բաժնին եւ 18 բախտաւոր անդամներ նուէրներ ստացան:

Սօսի Ներսիսեան-Յակոբեան



ԱՐՄԱՏ ԱՇՈՒՆ 2024

ՀՀԸՄիության «Արմատ» ծրագիրը մեկնարկեց իր վեցերորդ շրջանը, 2024 թուականի աշնան, առաջարկելով երեք տարբեր եւ հետաքրքրական թեմաներ՝ «Մեզ կապող լեզուն», «Մէկ եւ միակ Կոմիտասը» եւ «Ժառանգության հիւսուած թելերը»:

Վեցերորդ շրջանին աշխարհի տարբեր շրջաններէն մօտաւորապէս 72 երեխաներ մասնակցեցան ինչպէս Արժանքինէն, Հայաստանէն, Գանատայէն, Եգիպտոսէն, Գերմանիայէն, Իրանէն, Իտալիայէն, Յորդանանէն, Քուէթէն, Լիբանանէն, Զուիցերիայէն, Սուրիայէն, Թուրքիայէն, Արաբական Էմիրութիւններէն, Բրիտանիայէն եւ ԱՄՆէն:

Առաջին հանդիպման՝ «Լեզուն, որ մեզ կը կապէ»ի, ընթացքին մասնակիցները հաճոյքով ուսումնասիրեցին հայերէն լեզուն, գրաւիչ եւ **ինթերաքտիւ** խաղերու եւ ծրագիրներու միջոցով: Ոգեշնչող էր տեսնել, թե անոնցմէ շատեր աւելի քան երկու լեզուներ կը խօսին եւ ոգեւորուած են աւելի ընդլայնելու իրենց լեզուական հմտութիւնները: Հետաքրքրական էր, որ երբ երեխաները խորամուխ եղան արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի բառերուն եւ ըսելաձեւերուն մէջ, կրցան հասկնալ անոնց մէջ խտացած իմաստութիւնն ու մշակութային հարստութիւնը:

Երկրորդ հանդիպման, որ կը կրէր «Մէկ եւ միակ Կոմիտաս» խորագիրը, մասնակիցները հիանալի փորձառութիւն ունեցան՝ սուզուելով Կոմիտաս Վարդապետի կեանքին եւ երաժշտութեան մէջ: Ինթերաքտիւ խաղերու միջոցով պատմութիւնը կենդանացաւ, երբ երեխաները անհամբերութեամբ ծանօթացան այս նշանաւոր հայ վարդապետին, երաժշտա-

գէտին, երգահանին, երգիչին, ուսուցիչին եւ խմբավարին աշխատանքներուն:



Հանդիպման ամենէն հաճելի պահը յատկապէս հրաւիրուած «Շուշիկի» խումբին անդամ Մէրի Այգեցիի եւ Թամարա Աթանէսեանի հետ հանդիպումն էր: Անոնք հաճելի միջոցներով մասնակիցներուն սորվեցուցին Կոմիտասի մանկական երգերէն մէկը՝ «Ջան Գառնուկը»: Միասին երգելու ուրախութիւնը բոլորին համար անմոռանալի եւ սրտառուչ փորձառութիւն մը եղաւ:

2024ի աշունը աւարտեցինք մեր երրորդ հանդիպումով՝ «Ժառանգութեան հիւսուած թելերը», ուր մասնակիցները կախարդական ճամբորդութիւն մը սկսան, բացայայտելու համար հայկական կարպետի եւ գորգի ձեւաւորումի արուեստը: Գործնական աշխատանքներու միջոցով մասնակիցները կրցան տեսնել եւ իմանալ հայկական գորգի տարբեր տեսակներ, անոնց վառ գոյներն ու նախշերուն իմաստները:

Շատ հաճելի էր տեսնել կարգ մը երեխաներու իմացութիւնը հայկական գորգերու եւ կարպետներու մասին, եւ անհամբեր էին իրենց գիտցածները բաժնեկցելու մնացեալ մասնակիցներուն հետ:

Այս հանդիպման հիւրն էր տաղանդաւոր գորգագործուհի Նելլի Անանեանը: Ան բոլոր երեխաներուն սիրով իր արուեստանոցը հրաւիրեց, ուր ցուցադրեց գորգագործութեան իր թէքնիքները:

Նելլի Անանեանի ղեկավարութեամբ մասնակիցները գծեցին իրենց հայկական գորգերը, օգտագործելով հանդիպման ընթացքին սորված ձեւերն ու նախշերը:



ՄԵԾ ՔԻԹ

Պատմութենէն յայտնի է, որ Նշանաւոր մարդոց շատերը մեծ քիթ ունեցած են եւ թէ մեծ քիթը արտակարգ մարդու յատկանիշ է:

Պլուտարքոսի վկայութեամբ, Հռոմի հռչակաւոր օրէնսդիր Նումա Պոմպիլիոսի քիթը ունէր աւելի քան 15 սմ. երկարութիւն:

Հռոմէացի բանաստեղծ Օվիդիոսի քիթը այնքան մեծ էր, որ իր ժամանակակիցները զինք «Նագլօ» կը կոչէին, այսինքն մեծ քիթ:

Իտալացի մեծագոյն բանաստեղծ Տանթէ Ալիկիէրին եւս շատ մեծ քիթ

ունէր. անոր ժամանակակից գրագէտները երգիծական բազմաթիւ տողեր գրած են իր մասին:

Սակայն մեծ քիթին ամենէն աւելի կարեւորութիւն տուեր է Նափուլէոն Պոնափարթը: Ան կը վստահէր միայն մեծ քիթ ունեցող մարդոց, միշտ կը ձգտէր պետական բարձրագոյն պաշտօնները թեկնածուներէն մեծ քիթ ունեցողներուն տալ:

Շատերու կարծիքով մեծ քիթը մտային բացառիկ կարողութեան տէր մարդոց յատուկ է:



ՅՈՒՍԱԲԵՐ 80

Յուսաբեր Մշակութային Ընկերակցությունը տոնախմբեց իր 80-ամեակը Գարագաշեան բարեգարդուած սրահէն ներս Ուրբաթ, 24 Յունուար 2025-ի երեկոյեան, Ընկերակցութեան բազմաթիւ անդամներուն, համակիրներու եւ հիւրերու ներկայութեամբ:

Ընկերակցութեան ատենապետ Շանթ Կապէեան բացումը կատարեց այս հանդիսութեան. եւ որովհետեւ իր խօսքը նաեւ հակիրճ ամփոփում մըն էր այս ութսունամեայ ընկերակցութեան պատմութեան, զայն այստեղ կը ներկայացնենք ամբողջութեամբ:

«Հայ մշակոյթի հանդէպ գուրգուրանք եւ տիրութիւն ընելու հաստատ հաւատք, նորահաս սերունդներուն հայաշունչ դաստիարակութիւն, եգիպտական-հայկական դարաւոր բարեկամութեան ամրակայում եւ հայաւայել գործունէութիւն, եւ ամենէն ետք՝ երկար տարիներու գիտակից նուիրաբերում. ա՛յս է Յուսաբեր Մշակութային Ընկերակցութեան 80-ամեայ ծառայութեան վաստակը, որ այսօր բոլորս կը տօնենք:

Հիմնուած է 28 Յունիս 1944-ին: Անոր հիմնադիրներուն հաւատամքն ու ծրագիրներուն առանցքը հանդիսացած է հայ ժողովուրդի մշակոյթին մշակումը, Նեղոսի փերուն: Տարիներու ընթացքին իւրաքանչիւր վարչականի անմնացորդ ճիգին առարկան դարձած է հայ մանուկին, պատանիին եւ երիտասարդին հոգիին մէջ սերմանել հայկական բարքերուն եւ արժէքներուն հանդէպ գուրգուրանք, դիմակալելու համար ժամանակին եւ հայուն ճակատագրին զանազան հանգրուաններուն դժուարութիւնները:

Գահիրէի կեդրոնական շրջանին մէջ, 1952-ին բարձրացած է Յուսաբերի Տունը, ուր տակաւին հաստատուած են Յուսաբեր օրաթերթի խմբագրատունն ու Յուսաբեր թատերասրահը:

Յուսաբերի տան մէջ ընդունելութեան



արժանացած են եգիպտացի եւ օտար պետական դէմքեր եւ գործիչներ: Բեմ բարձրացած են տեղական երգչախումբեր, նուագախումբեր, ղեկավարութեամբ Բարսեղ Կանաչեանի, Աշոտ Պատմագրեանի, Կարպիս Ափրիկեանի, Երուանդ Ալեքսանեանի եւ բազմաթիւ հանրածանօթ արուեստագէտներու:

Յուսաբերի տան մէջ հիւրընկալուած են նաեւ թատերախումբեր Գասպար Իփէքեանի, Ճորճ Սարգիսեանի, Արփիար

Արփիարեանի եւ այլոց բեմադրողութեամբ եւ դերասանութեամբ:

Տասը տարի ետք, Հելիոպոլսոյ մէջ 1962-ին հիմնուած է ընկերային, մշակութային եւ մարզական համալիրը՝ Հելիոպոլսոյ Յուսաբեր ակումբը: Հայապահպանման ծրագիրներ հետապնդելով եւ ապահովելով մանուկներու, պատանիներու եւ երիտասարդութեան դաստիարակութիւնը, կազմուած են երգչախումբ, պարախումբ, պատանեկան եւ երիտասարդական միութիւններ, տեղի ունեցած են ասմունքային, դասախօսական եւ ազգային ոգեկոչական ձեռնարկներ, ինչպէս նաեւ հայ գիրքին եւ մամուլին նուիրուած ցուցահանդէսներ: Կ'արժէ նաեւ յիշել հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքներուն ծանօթացման նուիրուած ոգեկոչումները, ուր տեղի ունեցած են ձեռարուեստի, գաւառական բարքերու եւ հոգեւոր արժէքներու ներկայացումներ:

Յուսաբեր Մշակութային Ընկերակցութիւնը, տարիներու ընթացքին իր պատուաբեր գործունէութեամբ, եգիպտահայութեան հանդէպ փոխադարձ վստահութիւն եւ յարգանք ապահոված է եգիպտացի ժողովուրդին եւ պետական ղեկավարութեան մօտ:

Վերջին տասնամեակներուն, եգիպտահայութեան նօսրացումի պայմաններուն դիմաց, հայապահպանումի սուրբ ջախը սե-



րունդէ սերունդ փոխանցող ղեկավարներէն եւ համակիրներէն սկսեալ, մինչեւ նեցուկ կանգնող ծնողները, եգիպտահայ կեանքի յարատեւութիւնը յոյս ներշնչող վկաներն են, որոնց ազգանուէր գործունեութիւնը միշտ արթուն պիտի մնայ յաջորդ սերունդներու յիշողութեան մէջ: Յարգանք, տասնամեակներու ընթացքին անմնացորդ կերպով գործած նուիրեալներուն յիշատակին:

Վերջապէս, Գարագաշեան բարեգարդուած սրահի վերաբացման առիթով կ'ուզէի մեզ բոլորս շնորհաւորել եւ մեր խորին շնորհակալութիւնը յայտնել Ազգ. Առաջնորդարանին, առանց որուն նիւթական հսկայ օժանդակութեան, չէինք կրնար այս գործը գլուխ հանել»:

Ապա խօսք առաւ տորթ. Արմէն Մազլումեան, որ ըսաւ.

«Ինծի համար խոր պատիւ է այսօր կանգնիլ ձեր առաջ եւ երկու խօսք ըսել Յուսաբեր Մշակութային Ընկերակցութեան 80-ամեակին առթիւ: Այս առիթը պարզապէս կը գերազանցէ անցեալի յիշողութիւնը:

Ան կը ծառայէ որպէս համայնքին մշակոյթի եւ ինքնութեան մնայուն ոգիի վկայութիւն, որ ծաղկեր եւ գոյատեւեր է այս պատերէն ներս, վերջին 80 տարիներու ընթացքին:

«Միասին յարգենք անցեալը, գրկենք ներկան, եւ ակնկալենք նորարարութեամբ եւ մշակութային հարստութեամբ ապագայ մը» իր խօսքը վերջացուց տորթ. Ա. Մազլումեան:

Ապա օրուան հանդիսավար տիկին Գարոլին Մազլումեան հրաւիրեց գաղութի բարեջան Առաջնորդ Տ. Աշոտ Սրբ. Մնացականեան, իր սրտի խօսքը ըսելու:

Իր խօսքին ընթացքին Առաջնորդ Սրբազանը նաեւ ըսաւ.

«Ուրախալի է մեր համայնքին բարեգարդուած սրահներու բացումին ներկայ ըլլալ եւ մեր օրհնութիւնը բերել: Այս սրահները ընդունած են հարիւրաւոր նուիրեալ հայորդիներ, որոնք այս սրահներուն մէջ հաւաքուելով, կերտեր են ազգային կեանքը եւ պարարտ հող են ստեղծեր, որպէսզի յաջորդ սերունդները եւս մնան հայ, խօսին հայերէն, եւ իրենց ինքնութիւնը պահեն: Մեր ազգային կառոյցները յատկապէ՛ս եգիպտոսի մէջ, այն պարարտ հողն են, ուր մեր ներկայ սերունդը կրնայ ստանալ իր ազգային դաստիարակութիւնը»:

Երեկոյին ամբողջ ընթացքին կենդանի երաժշտութիւնը շոյեց ունկը ներկաներուն, Գահիրէի օփերայէն հրաւիրուած սրնգահարուհիի մը եւ տաւղահարուհիի մը կախարդական մատներով:

Նազելաճեմ աղջիկներու հայկական պարով մը վերջ գտաւ գեղարուեստական յայտագիրը այս երեկոյին, որմէ ետք ներկաները վայելեցին համադամ մատնուտեստը (finger food), որ պատրաստուած էր Յուսաբեր ակումբի խոհանոցներուն մէջ:

Մեր շնորհաւորանքները Յուսաբեր Մշակութային Ընկերակցութեան 80-ամեակին եւ Գարագաշեան բարեգարդուած սրահի վերաբացումին առիթներով:



ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Աղեքսանդրիայէն ստացած ենք նամակ մը, որ պէտք էր «Տեղեկատու»ի նախորդ թիւին՝ Հոկտեմբերին մէջ ըլլար (թիւ 113), սակայն նամակատան ուշացումին պատճառով, այս թիւին մէջ կը հրատարակենք զայն, միաժամանակ շնորհակալութիւն յայտնելով պարոն Թօսունեանին, իր ուշադիր վերաբերմունքին համար:

Աղեքս., 18 Նոյեմբեր 2024

Ազնուափայլ
Տիկին Մարուշ Երամեան,
Խմբագիր Գահիրէի ՀԲԸՄիութեան պաշտօնաթերթ «Տեղեկատու»ի,
Գահիրէ

Ստորագրեալս Կարօ Թօսունեան (նախկին ատենապետ Աղեքս. ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ), ուրախութեամբ կարդացի «Տեղեկատու»ի Յուլիսին թիւը, ուր տիկին Սօսի Ներսէտեան-Յակոբեան շատ գեղեցիկ գրութիւն մը գրած էր Աղեքս. ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պատմութեան մասին, սակայն մոռցած էր սկաուտական շարժումի հիմնադիր եւ երկարամեայ ղեկավար Յովհաննէս Չորլեանի անունը:

Յովհաննէս Չորլեան հիմնած է Աղեքս. ՀՄԸՄի սկաուտական շարժումը 1933-ին եւ ղեկավարած զայն մինչեւ 1966:

Սկաուտական շարժումը կարելոր էր Աղեքս. ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մէջ, այն ալ շնորհիւ Յովհաննէս Չորլեանի եւ իր պատրաստած պատասխանատու ղեկավարներուն, որոնք կը գործէն մինչեւ այսօր:

Մնամ յարգանք
Կարօ Թօսունեան
Աղեքսանդրիա, Նոյեմբեր 2024

ՀԱՅ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ

Արամազդ (յունական անուանումը՝ Զեւս) աստուածներու հայր, երկինքի ու երկրի արարիչ, լիութիւն, բարութիւն եւ արիութիւն պարգեւող:

Անահիտ (յունական անուանումը՝ Արտեմիս) մայր աստուածուհի, արգասաւորութեան եւ պտղաբերութեան մայր դիցուհին:

Միիր (յունական անուանումը՝ Հեփեստոս) արեւի, կրակի ու լոյսի, մաքրութեան ու ճշմարտութեան աստուածը՝ Արեգ-Միիր:

Վահագն (յունական անուանումը՝ Հերակլէս) պատերազմի, քաջութեան եւ

յաղթանակի աստուած:

Տիր (յունական անուանումը՝ Հերմէս) դպրութեան, պերճախօսութեան, գիտութեանց եւ ուսման, արուեստներու հովանաւոր աստուած:

Աստղիկ (յունական անուանումը՝ Ափրոտիթէ) սիրոյ եւ գեղեցկութեան, երկնային լոյսի եւ ջուրի դիցուհի:

Նանէ Արամազդի դուստր (յունական անուանումը՝ Աթենաս) ընտանիքի պահպան, իմաստութեան, ողջախիտութեան եւ ռազմի աստուածուհի:

Սպանդարամետ (յունական անուանումը՝ Հատէս) անդրաշխարհի աստուած:



ՓԷԿԻ ՀԻՆԱՅԷՔԵԱՆԻ ԱՐՈՒԵՍԸ

Երբ արուեստ կ'ըսենք, անմիջապես կը մտածենք նկարչության եւ քանդակագործության մասին: Ասիկա թէեւ ճիշդ է Հինայէքեանի պարագային, սակայն կարծեք մէկդի կը հրէ անոր գրագէտի երեսակը, որովհետեւ Հինայէքեան նաեւ գրագիտուի է, հրատարակուած չորս հատորներով:

Փէկի Հինայէքեանը ծնած եւ մեծցած է Եգիպտոսի մէջ:

Թէ՛ նկարչութիւնը, թէ՛ իր գրական աշխատանքը կարծեք յուշագրութիւնն են իր կեանքին, Գահիրէէն մինչեւ Գանատա եւ Միացեալ Նահանգներ: Իր գործը՝ նկարչութիւն թէ գրականութիւն, կը կրէ Եգիպտոսի մէջ ապրած տարիներուն ազդեցութիւնը:

Իր կայքէջին մէջ Հինայէքեան կ'ըսէ.

«Ես ամենէն առաջ գոյնի նկարիչ եմ, որ հիացած է անապատի տաք երկրային եւ ովկիանոսներու պաղ կապոյտ երանգներով: Իմ գոյներս Եգիպտական բնապատկերը՝ Սինայի անապատի լոյսի որակը եւ Միջերկրական ծովի փիրուզագոյն կապոյտը կը յիշեցնեն: Եգիպտոսը անջնջելի տպաւորութիւն ձգեր է վրաս եւ ազդեր է աշխատանքիս մեծ մասին վրայ: Ես հազուադէպօրէն կ'աշխատիմ վերջնական գործի մը համար կանխորոշուած տեսլականով, անորոշութեան եւ զարմանքի հնարաւորութեան առիթ տալով ինքզինքիս: Կը փորձեմ ակնդիրը ընկըղմել տարածութեան, գոյնի եւ լոյսի ընկալման փորձառութեան մէջ: Իմ նկարներս կ'արդիականացնեն ընկալումը՝ զգուշօրէն հաւասարակշռելով այս տարրերը: Օգտագործելով գոյնը եւ հիւստւածքը, ես կը փորձեմ շարժում ներշնչել իմ վերացական բնապատկերներու մէջ, որպէսզի դիտողին ստիպեմ թափառիլ այլ իրականութեան մը տարածքներուն մէջ»:

Նկարչուիին իր մասնագիտական ուսումը ստացեր է հետեւեալ կեդրոններուն մէջ.

Հռոմի «Լէոնարտո Տա Վինչի» Իտալիոյ արուեստի ակադեմիայէն շրջանա-

ւարտ:

Արուեստի պատմութիւն, Մըք Կիլ համալսարան, Մոնրէալ,

Ecole des Beaux Arts, Փարիզ,

Ժամանակակից տպագրութեան կեդրոն, Ժնեւ, Զուիցերիա:

Ինչպէս նաեւ բազմաթիւ ցուցահանդէսներ ունեցած է հետեւեալ քաղաքներուն մէջ.

Ժամանակակից կերպարուեստի պատկերասրահ, Լա Ճոլլա, Գալիֆորնիա,

Ethos Contemporary Art, Նիւ Փորթ Պիչ,

Գալիֆորնիա,

Մադորան պատկերասրահ, Տուլսա, Օքլահոմա,

Danielle Junod պատկերասրահ, Նիոն, Զուիցերիա,

Արտակցիոն պատկերասրահ, Ժնեւ, Զուիցերիա,

Galerie 22A, Ինսպրուք, Աւստրիա,

CCA պատկերասրահներ, Լոնտոն, Անգլիա:

Հինայէքեանի աշխատանքը ընդհանրապէս իւղաներկ է եւ կտաւի վրայ եղած **աքրիլիք**, ինչպէս նաեւ սահմանափակ տպաքանակով **օֆորպրներ**, որոնք երեւակայական բնապատկերներ կը ներկայացնեն, վերացական կատարումներ, տաք եւ երկրային երանգներով:

Արտայայտուելու իր միջոցը երբեմն նաեւ կացողական արուեստը կրնայ ըլլալ (collage):

Հանդարտ, երազային եւ բանաստեղծական գործերը խաղաղութիւն կը ներշնչեն ակնդիրներուն:

Նախքան նկարչութեան նուիրուիլը, Հինայէքեան Նիւ Եորքի մէջ աշխատեր է որպէս մասնագէտ ձեւաւորող (designer):

Իր նկարները մաս կը կազմեն բազմաթիւ անձնական հաւաքածոներու եւ ցուցահանդէսներու:

Հինայէքեան Զուիցերիոյ եւ ԱՄՆի (Գալիֆորնիա եւ Ֆլորիտա) միջեւ կը բաժնէ իր կեցութիւնն ու աշխատանքը:

Գալով գրագիտուիի իր երեսակին, ինչպէս ըսինք, հեղինակ է չորս հատոր-



ներու.

Collection of Short Stories, The Girl From Cairo, Of Julia and Men, Lovers of Tomorrow.

Lovers of Tomorrow

Վաղուան սիրահարները

Ի՞նչ կ'ընտրէիք՝ կեանքի երազա՞նք, թե՞ մեծ սէր: Այս գեղեցիկ պատմութիւնը կը ներկայացնէ կնոջ մը կեանքը, փառասիրութիւնը, սրտի ցան ու ինքնաբացայայտումը: Իւրաքանչիւր էջ կարծես բացիկ մըն է այլ աշխարհէ մը ղրկուած:

The Girl from Cairo

«Աղջիկը Գահիրէէն»

Յուշագրական իր հատորին՝ «Աղջիկը Գահիրէէն»ի մէջ կը գտնենք հեղինակին 1940-1963 տարիներու կեանքը, ուր կը նկարագրուի Գահիրէն, համաշխարհային երկրորդ պատերազմի օրերուն. ինչպէս եւ իր առաջին սիրոյ եւ ամուսնութեան պատումը:

Այս հատորի հերոսուհին մշակութային կարծրատիպերու մէջ բռնուած ապըստամբ երիտասարդուհի մըն է, որ կ'ուզէ աղջիկներու համար նախասահմանուած կեանքէն փախչիլ, կին մը, որ իր սեփական խօսքը կը ստեղծէ գիրով եւ գոյնով եւ երազանքներու իրականացումին կը ձգտի:

Of Julia and Men

«Ճուլիայի եւ տղամարդոց մասին»

Ճուլիա Շամ'ունի, երիտասարդ լիբանանցի կնոջ եւ անոր առնչուած մարդոց պատմութիւնն է ասիկա:

Լոյս տեսեր է 2015 թուականին:

Of Humans and Animals

«Մարդոց եւ կենդանիներու մասին»

Կարճ պատմուածքներու եւ յօդուածներու ժողովածու, որ մտածելու մղող գիրք է, տարբեր վայրերու մասին, բազմերանգ հերոսներու ընդմէջէն:



ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

Ունազնդակի փորձի ժամանակ, 12 տարեկան տղեկ մը երկվայրկեանի անուշադրութեան պատճառաւ, ոտքը դարձնելով, սայթաքեցաւ: Խումբին պատասխանատուն անմիջապէս գործի անցաւ, երկու հոգի տղեկը շալկեցին, ինքնաշարժին մէջ դրին զինք եւ ակնթարթի մը մէջ փոխադրեցին հիւանդանոց:

Այս պատահարը զիս 44 տարիներ ետ տարաւ՝ Հինգշաբթի, 21 Յունուար 1971-ին օրը: Նուպարեան Ազգային Վարժարանի հինգերորդ դասարանի աշակերտուհի էի: Ճաշարան երթալու ակետաբեր զանգը հնչած էր արդէն եւ մենք ճաշարան մտնելէ առաջ, հինգ վայրկեաննոց զբօսանքէն կատարելապէս օգտուելու համար, արդէն իսկ սկսած էինք «ազատում» խաղալ:

1967ի պատերազմին պատճառաւ, Նուպարեանի շէնքին ներքեւի բաց տարածութիւնը աղիւսէ պատով մը բաժնուած էր ընդարձակ բակէն: Ես, խոյս տալով ինծի բռնել ուզող դասընկերոջմէս, ետ նայելով կը սուրայի եւ ուժգին բախեցայ պատին ետեւէն յանկարծ յայտնուած ուրիշ դասընկերոջ մը ու գետին փռուեցայ: Անակնկալէն շշմած էի ու սրունքիս ցաւէն չէի կրնար ոտքի ելլել:

«Սօսին ինկա՛ւ ... Սօսին ինկա՛ւ...» կը լսէի ամէն կողմէ: Պատուիս չդնելով գետին փռուած մնալ՝ փորձ մը ըրի կայնելու, սակայն ոտքս դաւաճանեց ինծի: Երկու հոգի թեւերէս մտած օգնեցին որ դարմանատուն հասնիմ ու երկարիմ անկողնին վրայ: Բոլորը ճաշարան մտան ու զիս ձգեցին օրիորդ Պերթային հետ, որ որպէս «հիւանդապահուհի» տարրական դարմանումներ կ'ընէր աշակերտներուն:

Գիտէր անառակ ըլլալս եւ կարծէք առիթը պատեհ գտաւ հին հաշիւներ մաքրելու հետս:

«Մի՛ շփանար, աղջի՛կ, ելի՛ր քալէ, ճաշարան գնա՛», կ'ըսէր վրիժառու շեշտով մը:

«Չեմ կրնար, Օրիորդ, ոտքս շա՛տ կը ցաւի», կ'ըսէի, ինծի հետ խոտոր համեմատող խեղճուկ շեշտով:

«Ոտքդ վար կախէ, քիչ մը շփեմ», ըսաւ ու ցաւած ոտքս մարձում ընելու պէս, երկու ձեռքերուն մէջ առած, աջ-ձախ դարձուց: Պոռալ սկսայ... կարեւորութիւն չտուաւ:

Իյնալուս եւ չկարենալ կայնելուս լուրը հասած էր մեր տնօրէն պարոն Պապիկեանին, որ դարմանատուն եկաւ ու մէկ յօնքը ակնոցին շրջանակէն վեր բարձրացուցած, զարմացած վրաս կը նայէր:

«Ի՞նչ պատահեցաւ, աղջի՛կս», ըսաւ փաղաքշական շեշտով, «քեզի չի վայելեր այսպէս պառկած վիճակը», ակելցուց:

«Ոտքս շատ կը ցաւի, Պարոն», ըսի: «Ճաշարան պիտի երթա՞ս թէ ոչ», բան մը ըսած ըլլալու համար խօսեցաւ Օրիորդ Պերթան: «Չեմ կրնար քալել եւ անօթի ալ չեմ» ըսի: «Սակառդ հոս բերել կու տամ, բան մը կեր, աղջի՛կս», ըսաւ փափկանկատ ար. Տնօրէնը, «յետոյ կը մտածենք թէ ի՞նչ պիտի ընենք», ակելցուց:

Սակառս բերուեցաւ, կերակուրիս ամանները դրուեցան անկողնին վրայ, սակայն չէի կրնար պատառ մը անգամ բերանս դնել: Նկատելով որ խնդիրը լուրջ էր, օրիորդ Պերթան խորհուրդ տուաւ հեռաձայնել մեր տուն եւ եղելութիւնը հաղորդել:

Ճաշի պահը աւարտած, մեծ զբօսանքին երթալէ առաջ, դասընկերներս այցելութեան եկան: Չէին կրնար հաւատալ որ խեղճուկ մը պառկած, անկարող էի շարժելու:

Այդ ժամուն հայրիկս տակաւին գործի ըլլալուն, մայրիկս թաքսի մը առնելով եկաւ դպրոց: Վիճակս տեսնալով նախընտրեց անմիջապէս տուն տանիլ զիս: Դպրոցին տնտեսը զիս շալկեց մինչեւ թաքսին ու երբ տուն հասանք, թաքսին վարիչը զիս տուն փոխադրեց: Մուտքի սենեակին բազմոցին վրայ երկարած կը տառապէի:

Տնեցիները, տիւանդորրէն արթնալով, հաւաքուած էին շուրջս: Անոնց ամէն մէկ քայլէն յառաջացած ցնցումը սենեակին տախտակամածին վրայ կը կրկնա-



պատկեր ցաւ:

«Վախ-վախ ծագուկս, աս ի՞նչ գէշ ինկեր ես», կ'ըսէր մեծ մայրիկս խիստ մտահոգ:

«Եաւրիկ Սօսի, ոտքիդ մատները շարժել, ծունկդ ծալել կրնա՞ս», մեծ մօրեղբայրս Օննիկ Աւետիսեանն էր քովս:

«Քանի որ կապուտցած եւ ուռած չէ, ուրեմն ցաւը շուտ մը պիտի անցնի», լաւատես մեծ հայրիկս՝ Սարուխանն էր խօսողը:

Քիչ մը ետեւ, մեծ մօրեղբօրս կինը, Անահիտը, տխուր-տխուր վրաս կը նայէր ու կը կրկնէր՝ «չար վայրկեան...»:

Մայրիկս անհամբեր հօրս գործէն տուն վերադառնալուն կը սպասէր, միասին որոշելու ճակատագիրս:

Դպրոցին օթօպիւսէն քոյրիկս իջաւ աճապարանքով ու ցատկեց քովս, բազմոցին վրայ: Ոսկորիս ցաւը սիրտս ծակեց:

Հայրիկս եկաւ տուն, ժպիտով մօտեցաւ ինծի եւ կատակեց «եթէ միայն մէկ ոտքդ է ցաւածը, բան մը չէ, տոքթ. Եագուպեանին խօսիմ, թող գայ ըսէ ի՞նչ պէտք է ընել», ըսաւ:

Տնեցիները շուրջս հաւաքուած կը սպասէին բժիշկին, որ չուշացաւ: Սրունքս աջ-ձախ դարձուց տառապանքս աւելցնելով, իր բերնէն անպակաս ծխամորճը քանի մը անգամ քաշեց, ծուխը դուրս տուաւ, փոսը ինկած աչքերը գոցեց-բացաւ եւ «լաւ կ'ըլլայ եթէ վաղը հիւանդանոց տանիք Սօսին, X-Ray մը ըրէք», ըսաւ ու մեկնեցաւ: Անգամ մը որ բժիշկը «հիւանդանոց» բառը արտասանեց, կացութիւնը լուրջ երեւոյթ ստացաւ: Այդ ժամանակ «հիւանդանոց» բառը չարագուշակ տպաւորութիւն կը ձգէր լսողին վրայ. իսկ գիշերով երթալ այդ տեղը՝ աներեւակայելի բան էր:

«Առտուն կը տանինք հիւանդանոց, ինչպէս որ ըսաւ բժիշկը», որոշեց հայրիկս «կրնայ ըլլալ գիշերը կը լաւանաս»,

աւելցուց ան տեսնելով զարիւրած արտայայտութիւնս: Հիմա չեմ յիշեր թէ զարիւրանքս «հիւանդանոց»էն էր թէ ոչ լման գիշեր մը ցաւ քաշելու հեռանկարէն:

Խնդիրը այն էր, որ այդ գիշերուան համար Գահիրէի Օփերային մէջ Պօլշոյի «Կարապի Լիճ» պալէին ներկայացման տոմսակ գնած էին բոլորիս համար: Առանց այլեւայլի, մեծ մայրիկս զոհեց պալէին ներկայ ըլլալու իր հաճոյքը եւ քովս մնաց: Ամբողջ գիշերը ոսկորիս ցաւէն տառապեցայ, հակառակ որ ցաւազրկիչ կլլած էի:

Առաւօտուն հայրիկս ու մայրիկս հետ ուղղուեցանք Ապպասիյէի Իտալական հիւանդանոցը: Այդ ժամանակ, Հելիոպոլսոյ միակ հիւանդանոցը որ կոչուած էր թաղին անունով, անկումի վիճակի մէջ էր եւ Իտալական հիւանդանոցէն զատ լաւ հիւանդանոց չկար աւելի մօտ:

X-Rayին արդիւնքը պարզեց, որ ձախ սրունքս, ծունկէն վար, թէ՛ ճաթած եւ թէ՛ ալ կոտրած էր երկու տարբեր տեղերէ... պէտք էր գաճի մէջ դնել զայն:

Ջուրին մէջ լուծուած գաճաքարի բաղադրութեամբ յագեցած ծրար առ ծրար շղարշներով պինդ փաթեցին սրունքս դուրս ձգելով ոտքիս մատներուն ծայրերն ու զիստիս վերի մասը միայն: Բարակ ու թեթեւ սրունքս վերածուեցաւ 10 քիլօ բեռան մը, զոր պիտի կրէի 60 օր: Հազիւ գաճը չորցաւ եւ սրունքիս հետ մէկ մարմին եղաւ ու անշարժացուց կոտրած-ճաթած ոսկորս, ցաւս անմիջապէս անցաւ:

Անցեալի այս դէպքերը տակաւին շարժապատկերի նման աչքիս առջեւէն կ'անցնէին, երբ փորձին ժամանակ սայթաքած տղեկը ետ բերին հիւանդանոցէն: Բարեբախտաբար լուրջ բան մը չէր պատահածը:

*Սօսի Ներսիսեան-Յակոբեան
Յունուար 2025*

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ


ՓՈԼ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Լուս Անճելլուսի քաղաքապետ Քերրն Պես քաղաքին գլխավոր ձեռնարկներու, ներառեալ՝ 2028ի Ողիմպիականներուն եւ 2026ի աշխարհի ֆութպոլի աւարտական խաղերու մրցումներու կազմակերպման պատասխանատու գրասենեակին վարիչ նշանակեց Լուս Անճելլուսի քաղաքապետական խորհուրդի նախագահ Փօլ Գրիգորեանը, որ իր պաշտօնը պիտի ստանձնէ 8 Դեկտեմբերին, երբ հեռանայ Լուս Անճելլուսի քաղաքապետական խորհուրդի նախագահի պաշտօնէն:



ՍՈՖԻԱ ԲԱՂՐԱՄԵԱՆ


Ութ տարեկան Սոֆիա Բաղրամեան նուաճեր է ոսկի մետալը, խնդիրներու լուծման մրցումին մէջ: Ճատրակի աշխարհի առաջնութեան մաս կազմող այս մրցաշարքը տեղի ունեցած է 21 Նոյեմբերին, Իտալիոյ Մոնթեսիլվանօ քաղաքին մէջ, Նոյեմբեր 14-27: Սոֆիան յաղթական հանդիսացեր է նաեւ Եւրոպայի արագ ճատրակի մինչեւ 8 տարեկան աղջիկներու մրցաշարքին, որ տեղի ունեցեր է այս տարի Փրակի մէջ:



«ՔԱՂՅՐ ԵՐԿԻՐՍ»

Բեմադրիչ Սարին Հայրապետեանի «Քաղցր Երկիր» (My Sweet Land) ֆիլմը ներկայացուած է վաւերագրական ֆիլմերու միջազգային ընկերակցութեան (IDA) մրցանակաբաշխութեան երեք անուանակարգերուն համար.

- Լաւագոյն մոնթաժ (Ռաֆայէլ Մարտին-Հոլգեր եւ Սարին Հայրապետեան)
- Լաւագոյն շարժանկարչական աշխատանք (Սարին Հայրապետեան)
- Լաւագոյն ուրոյն երաժշտութիւն (Տիգրան Համասեան)




Ֆիլմին հերոսը 11 տարեկան Վրէժն է, որ կ'երազէր ատամնաբոյժ դառնալ Արցախի մէջ, իր գիւղին համար:

Նախապէս ֆիլմը դուրս մնացեր էր Օսկարի մասնակացութենէն, Ատրալէյճանի ճնշումներուն որպէս հետեւանք:

ՄՐՑԱՆԱԿ ՀԱՅ ԴԱՇՆԱԿԱՀԱՐԻՆ

Հոլանտայի մէջ կայացած «ՈՍԿԻ Դասական Երաժշտութեան Միջազգային Մրցում»ին 17 տարեկան Եդուարդ Արեւշատեան արժանացեր է առաջին մրցանակին:

«ՈՍԿԻ»ն առջանց մրցում մըն է, որ կը միտի աշխարհի չորս ծագերէն երիտասարդ տաղանդներ գտնել, անոնց առիթ ընծայել հանրաճանաչ դառնալու եւ երաժշտական աշխարհը իրենց տաղանդով հարստացնելու:



ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԳԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

14 Դեկտեմբեր 2024-ին Երեւանի մէջ կայացաւ «Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններ. մարտահրաւերներ եւ հնարաւորութիւններ» խորագրով խորհրդաժողովը,



որուն մասնակցեցան քաղաքական, գիտական եւ փորձագիտական շրջանակներու ներկայացուցիչներ:

Մասնակիցները քննարկեցին Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբերություններուն տարբեր կետերը, ինչպէս

-Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացի դերը անվտանգային համաթեքսթին մէջ,

-Փանթուրքիզմի գաղափարախօսութեան սպառնալիքները,

-Հայ-թրքական տնտեսական յարաբերութիւններու հնարաւորութիւնները եւ անոնց տակ թաքնուած վնասները:

Ելոյթ ունեցան Հայաստանէն եւ սփիւռքէն տարբեր ասպարէզներու մասնագէտներ:

Խորհրդաժողովի ընթացքին շեշտուեցաւ, որ Թուրքիոյ քաղաքականութիւնը ոչ միայն ուղղուած է Հայաստանի ինքնիշխանութեան ու անվտանգային համակարգի թուլացման, այլ ամբողջ տարածաշրջանի ապակայունացման:



«UN WEEK-END À L'EST»

Նոյեմբեր 20-ին, Փարիզի մէջ ծայր առաւ «Un Week-end à l'Est» ամենամեայ մշակութային փառատօնը, որ այս տարի նուիրուած է Հայաստանին՝ «Երեւան» ընդհանուր խորագրով:

Շուրջ տասը օր շարունակ Փարիզի սիրտին վրայ գտնուող նշանաւոր սրահներուն մէջ,– որոնց շարքին՝ Շաթլէի, Օտէօնի, Ալիանս Ֆրանսէզի թատրոնները, Սէն-ժերմեն-տէ-Փրէ եկեղեցին, Գրականութեան տունը եւ այլն,– կը ներկայացուի հայկական հարուստ մշակութային համայնապատկերը՝ երաժշտութիւն, գրականութիւն, թատրոն, շարժանկար, պարարուեստ եւ կերպարուեստ: Փառատօնի բազմաոճ մշակութային նախաձեռնութեան ծիրին մէջ կ'ընթանան շուրջ երեսուն միջոցառումներ՝ հինգ տասնեակէ աւելի հայ արուեստագէտներու մասնակցութեամբ:



«ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի ՄՐՑԱՆԱԿԸ

«Նոր Հայաստան» հանդէսին (Nouvelles d'Armenie) մրցանակը տեղի ունեցաւ Իլ տը Ֆրանս (Ֆրանսա) շրջանի աջակցութեամբ:

Ֆրանսացի գրող եւ պատմաբան Միշէլ Մարիան ներկայացուց դատակազմին որոշումը վէպի բաժնին՝ Սուսաննա Յարութիւնեանի «Ագռաւները Նոյէն Առաջ» վէպին համար (Ravens before Noah), որ հրատարակուել է Editions Les Argonautes հրատարակչութեան կողմէ:

Յարութիւնեան Հայաստան կ'ապրի. իր փոխարէն մրցանակը ստացել է հրատարակիչ Կատարինա Լոյս վան Հոֆը: Ravens before Noah վէպը արդէն լոյս տեսել է վեց լեզուներով եւ շուտով այլ լեզուներու ալ պիտի թարգմանուի:



ՃԳՆԱԽՈՐԵԱՆԻ ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Ջութակահար-խմբավար Էմմանուէլ Ճգնաւորեան, զաւակը լոնտոնաբնակ իրանահայ երաժիշտ-երգահան Լորիս Ճգնաւորեանի, երաժշտական ղեկավար նշանակուած է Միլանոյի (Իտալիա) սիմֆոնիք նուագախումբին:

Էմմանուէլ Ճգնաւորեան միայն 28 տարեկան է:



շար. էջ 35 →



Հ.Մ.Ը.Մ. ԱՐԱՐԱՏԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Հինգշաբթի, 21 Նոյեմբեր 2024-ին սկսաւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի տարեկան եգիպտահայ պասքէթ-պոլի մրցաշարքը, որ նուիրւած էր ակումբին հիմնադրութեան 110-ամեակին:

Մրցաշարքը կը վայելէր հովանաւորութիւնը եգիպտոսի Հայոց Թեմին Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի: Պատուոյ հիւրերն էին Գերապայծառ Տ. Գրիգոր Օգոստինոս Եպս. Գուսան, վիճակաւոր առաջնորդ Աղեքսանդրիոյ եւ Երուսաղէմի Կաթողիկէ հայոց, ինչպէս նաեւ եգիպտոսի մէջ Հայաստանի Հանրապետութեան նորանշակ արտակարգ եւ լիազօր դեսպան դոկտ. եւ տիկին Արմէն Սարգսեան: Մրցաշարքին կը նախագահէր տոքթ. եւ տիկին Սուրէն Պայրամեան:

Օրուան առաջին մրցումը աղջիկներու խաղ մըն էր Հ.Մ.Ը.Մ. Արարատի 14 տարեկանէն վար եւ Ղապա ակումբին միջեւ, որ աւարտեցաւ ի նպաստ Ղապային, 30-21 արդիւնքով: Անոնք ստացան բաժակը, որ նուիրուած էր տոքթ. եւ տիկին Աբրահամ Թահթապրունեանի կողմէ:

Երկրորդը՝ 5 հոգինոց ֆութ-պոլի մրցումն էր Արարատի 14 տարեկանէն վար եւ Էլ-Տարի տղոց միջեւ. Էլ-Տարի փոքրիկները յաղթական հանդիսացան 5-4 արդիւնքով եւ ստացան բաժակը, որ նուիրւած էր տէր եւ տիկին Վահրամ Կէվրէկեանի կողմէ: Զարմանալի երեւոյթ մը պարզուեցաւ՝ պր. Կէվրէկեան հազիւ թէ արծաթեայ մետալները կ'անցնէր Արարատի պա-

տանիներուն վիզէն, անոնք անմիջապէս կը հանէին զանոնք եւ իրենց ձեռքերուն մէջ պահած դուրս կ'ելլէին դաշտէն...

Յաջորդ խաղը կրկին 5 հոգինոց ֆութ-պոլի մրցում մըն էր Արարատի եւ Էլ-Տարի 18 տարեկանէն վար խումբերուն միջեւ. Արարատի խումբը յաղթեց 6-5 արդիւնքով եւ ստացաւ տէր եւ տիկին Վահրամ Կէվրէկեանին նուիրած բաժակը:

Վերջին մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ Սրբուհի Թերեզայի երէց տղոց խումբերուն միջեւ էր: Սկիզբը արդիւնքի տարբերութիւնը շատ չէր, պասքէթ մը հոս, պասքէթ մը հոն, սակայն հետզհետէ Արարատի տղաքը կարողացան մեծ առաւելութիւն արձանագրել եւ խաղը վերջացաւ ի նպաստ իրենց, 87-68 արդիւնքով:

Ուրբաթ, 22 Նոյեմբերի յայտագրին վրայ երեք մրցումներ կային. առաջինը՝ Հ.Մ.Ը.Մ. Արարատին 14 տարեկանէն վար տղոց եւ Հելիոլիտոյի միջեւ էր, որ աւարտեցաւ ի նպաստ Արարատին: Անոնք ստացան բաժակը, որ նուիրւած էր տէր եւ տիկին Կարէն Եանըգեան:

Երկրորդ խաղը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒ-ՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի աղջիկներուն միջեւ էր: Կամքի խումբէն, կամքէ անկախ պատճառներով, երկու մարզիկուհիներ կը բացակայէին եւ խումբը, ստիպուած, ներկայացած էր միայն հինգ հոգիով: Հակառակ որ սկիզբը Կամքի խումբը բաւական լաւ դիմադրութիւն ցուցաբերեց, սակայն պահեստի խաղացող չունենալնուն, հինգ մարզիկուհիները լման մրցումը խաղա-

← շար. էջ 34-էն

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

«ԽԱՉՔԱՐ» ՀԱԽԱՔԱԾՈՆ

ՀԲԸՄիութիւնը ուրախ է իր համագործակցութեան համար Backes & Strauss-ի՝ բարձրորակ ժամացոյցներու եւ ոսկեղէնի աշխարհահռչակ ընկերութեան հետ, ներկայացնելով «Խաչքար» հավաքածոյին սահմանափակ թիւով՝ միայն 50 օրինակ ժամացոյցները, որոնք պատրաստուած են Զուիցերիոյ մէջ:

Այս հավաքածոյի վաճառքէն ստացուած շահը ամբողջութեամբ պիտի յատկացուի ՀԲԸՄիութեան Համաշխարհային օգնութեան հիմնադրամին:





ցին... Խաղը աւարտեցաւ ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն, 56-22 արդիւնքով:

Վերջին մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատին եւ ՀՄԸՄ Կամքին տղոց միջեւ էր. մինչեւ երկրորդ քառորդախաղին աւարտիլը ուժերը բաւական հաւասարակշռուած էին եւ արդիւնքը 25-25 էր: Սակայն կամաց-կամաց Արարատը կարողացաւ առաւելութիւն արձանագրել եւ մրցումը աւարտեցաւ ի նպաստ իրեն:

Շաբաթ, 23 Նոյեմբերին առաջին խաղը Հ.Մ.Ը.Մ. Արարատի 18 տարեկանէն վար տղոց եւ էլ Նասրի միջեւ էր. Արարատի տղաքը յաղթական հանդիսացան 55-47 արդիւնքով եւ ստացան բաժակը, որ նուիրած էին տոքթ. եւ տիկին Լորիս Քէօհնէլեան:

Յաջորդ մրցումը Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի աղջիկներուն միջեւ էր. Արարատի աղջիկները դիրին յաղթանակ մը տարին, 70-15 արդիւնքով:

Վերջին խաղը Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻներուն տղոց խումբերուն միջեւ էր, որ սկսաւ ու աւարտեցաւ խաղաղ ու բարեկամական մթնոլորտի մը մէջ: Մրցումը աւարտեցաւ 71-55 արդիւնքով, ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻին:

Կիրակի, 24 Նոյեմբերին աւարտական խաղերը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի երկսեռ խումբերուն միջեւ էին: Աղջիկներուն մրցումին սկիզբը Արարատի աղջիկները բաւական լաւ դի-

մադրութիւն ցուցաբերեցին եւ մինչեւ երկրորդ քառորդախաղին աւարտիլը թիւ տարբերութիւնը քիչ էր: Սակայն, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները հետզհետէ առաւելութիւն արձանագրեցին իրենց լաւ խաղարկութեամբ ու յաղթանակը ապահովեցին, 57-36 արդիւնքով: Խմբապետուհի Մարինա Սիմոնեան-Պըլըքտանեան ստացաւ բաժակը, որ նուիրած էին տէր եւ տիկին Աւօ Քելլէեան: Վարձքը կատար խումբին պատասխանատու Սեւան Տրդատեանին եւ իրեն օգնական Արեգ Աբգարեանին, այս յաղթանակին համար:

Նախքան տղոց աւարտական խաղին սկսիլը, Հ.Մ.Ը.Մ. Արարատի ատենապետ տիար Լեւոն Դելփեան խօսք առաւ եւ շնորհակալութիւն յայտնեց եգիպտահայ չորս մարզական ակումբներուն, որոնք մասնակցած էին ակումբին հիմնադրութեան 110 ամեակին նուիրուած այս մրցաշարքին: Յուշանուէրներու փոխանակում տեղի ունեցաւ ակումբներու ատենապետներուն միջեւ: Ապա օրուան նախագահ տոքթ. Սուրէն Պայրամեան ըրաւ իր սրտի խօսքը: Վերջապէս, Հ.Յ.Դ.ի կողմէ Տիար Շանթ Կապէեան խօսք առաւ:

Վերջին մրցումը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի տղոց միջեւ էր: Նախորդ մրցաշարքին, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ միայն մէկ կէտով յաղթական հանդիսանալը վերանորոգած էր Հ.Մ.Ը.Մ. Արարատին յաղթելու յոյսին կարելիութիւնը: Միեւնոյն ժամանակ պարտուելու սպառնալիքին տակ դրած էր ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը: Մրցումը սկսաւ Արարատի տղոց գերազանց եւ





ինքնավստահ խաղով եւ շուտով արդիւնքը հասաւ 13-0-ի ի նպաստ իրենց եւ ի զարմանս ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ համակիրներուն: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը շփոթած էին. քանի կը փորձէին սրբագրել իրենց սխալները այնքան ճախողութիւնը յամառօրէն կառչած կը մնար իրենց: Քանի քանի ստոյգ յարձակումներ առանց պասքէթ արձանագրելու կը վերջանային: Միւս կողմէ, Արարատի տղաքը քաջալերուած արդիւնքէն եւ դիմացի խումբին անկազմակերպ վիճակէն, սկսան խաղալ յաղթականի հովերով... Սակայն երրորդ քառորդախաղէն սկսեալ փոխուեցաւ խաղը. ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը կարողացան ձերբազատուիլ ճախողութիւններէն եւ ստոյգ արձակումները պասքէթներու թարգմանելով, թիւի տարբերու-

թիւնը նուազեցուցին, հաւասարեցան ու անցան: Մրցումը աւարտեցաւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց յաղթանակով, 67-62 արդիւնքով:

Խմբապետ Արամ Աբիկեան ստացաւ բաժակը, որ նուիրուած էր տէր եւ տիկին Վարդան Գազանճեանի կողմէ: Վարձքը կատար խումբին պատասխանատու Ռուբէն Սիմոնեանի եւ իր օգնականներ Ժիրայր Սուլթանեանի եւ Արմէն Իրատեանի, այս յաղթանակին համար:

Մրցաշարքին բոլոր մետալները նուիրած էին տէր եւ տիկին Վարդ Ալեքսանեան:

**Սօսի Ներերեան-Յակոբեան
Նոյեմբեր 2024**

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՓԱՐՈՍԸ Հին աշխարհի եօթը հրաշալիքներէն

Կառուցուած է Մեծն Աղեքսանդրի յաջորդներէն Պտղոմէոս Սոտէր եւ անոր որդի Պտղոմէոս Ֆիլատելֆիսի ձեռքով, 284-246 Քա., Աղեքսանդրիա քաղաքի մուտքին գտնուող Ֆարոս կղզիին վրայ, որ թումբով մը ցամաքին միացած էր. հոսկէ եկած է հայերէնի «փարոս» բառը:

Փարոսը ճերմակ մարմարէ քառակուսի կառոյց մը եղած է, 103-118 մ. բարձրութեամբ: Վերի մասերուն վրայ հայելիներ դրուած էին, որոնք կը ցոլացնէին եկող նաւերը: Գազաթին վրայ կը վառէր զօրաւոր լոյս մը, որ մինչեւ 47 քմ. հեռուէն կ'երեւէր:

Փարոսի ճակատին արձանագրուած էր՝ «Պտղոմէոս Թագաւոր, նաւաստիներու օգտին համար»:





ՄՐԲՈՒՀԻ ԹԵՐԷԶԱՅԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Սրբուհի Թերեզայի եգիպտահայ պասքեթ-պոլի տարեկան մրցաշարքը տեղի ունեցավ յապաղումով, դաշտին վերանորոգումին պատճառաւ, Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի 20, 21 եւ 22 Դեկտեմբեր 2024-ին, հովանաւորութեամբ Աղեքսանդրիոյ եւ Երուսաղէմի Կաթողիկէ Հայոց Վիճակաւոր Առաջնորդ Գերպ. Տ. Գրիգոր Օգոստինոս Եպս. Գուսանի եւ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի՝ Առաջնորդ Եգիպտոսի Հայոց Թեմին:

Հանդիսավար տիար Գրիգոր Միքայէլեան դաշտ հրաւիրեց հոգեւոր հայրերը աղօթքով կատարելու հիմնովին նորոգւած դաշտին ու անոր շրջակայ տարածութեան բացումը: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց նիւթական օժանդակութեամբ սատարած էին վերանորոգութեան մեծածախս աշխատանքներուն: Մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց տոքթ. Գէորգ Երզնկացեանին՝ ատենապետ Գահիրէի Հ.Ֆ.Ը.Մ.ի Շրջանակային Յանձնաժողովին, Միութեան ըրած նիւթական յատկացումին համար:

Գերշ. Տ. Աշոտ Մնացականեան եւ Գերապայծառ Տ. Գրիգոր Օգոստինոս Գուսան յիշատակի յուշանուէրներ յանձնեցին Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ատենապետ տոքթ. Հրայր Տրդատեանին, նաեւ Patronage եւ Էլ Տար ակումբներուն ատենապետներուն, առ ի երախտագիտութիւն իրենց սիրայօժար կերպով արտօնած ըլլալուն, որ Սրբուհի Թերեզայի խումբը մարզուի իրենց դաշտերուն վրայ, նորոգութեան շրջանին:

Ապա, տիար Միքայէլեան հրաւիրեց եգիպտահայ չորս մարզական ակումբներուն ատենապետները՝ տոքթ. Հրայր Տրդատեան (Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ), տիկին Անի Թիւթինճեան-Խայաթ (Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ), տիար Լեւոն Դելփեան (Հ.Մ.Ը.Մ. Արարատ) եւ տիար Զաւէն Լէյլէկեան (Հ.Մ.Ը.Մ. Կամք) ու անոնց յանձնեց գնահատանքի յուշանուէրներ: Ան յատկապէս յիշեց անունները

րը դուրս. Ճորճ Սիմոնեանին եւ տիար Պերճ Միսքեանին, որոնք որպէս եգիպտահայ պասքեթ-պոլի յանձնաժողովին անդամներ, իրենց հաւասարակշռուած եւ արդար մօտեցումով կը հարթեն ստեղծուած որեւէ կնճռոտ հարց, որպէսզի գոյատեւեն այս մրցաշարքերը:

Վերջապէս, տիար Միքայէլեան պատմականը ըրաւ Սրբուհի Թերեզայի մարզական ակումբին հիմնադրութեան եւ ըսաւ, թէ 1972-ին Ռաֆայէլ Պայեան Սրբազանին օրով էր, որ գաղափարը ծագած էր մարզական ակումբ մը հիմնելու Սրբուհի Թերեզա Մանուկ Յիսուսի եկեղեցիին* կողքին: Այս քայլին մեծ խանդավառութեամբ ձեռնարկեցին այդ ժամանակուան վարդապետներ Յովհաննէս Գասպարեանն ու Պետրոս Թարմունին:

Օրուան առաջին մրցումը Սրբուհի Թերեզայի եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի տղոց խումբերուն միջեւ էր, որուն սկիզբը, Կամքը լաւ խաղարկութիւն ցուցաբերելով, առաւելութիւն արձանագրեց. սակայն պահեստի մարզիկներու չգոյութեան պատճառաւ, ան չկարողացաւ տոկալ եւ մրցումը աւարտեցաւ ի նպաստ Սրբուհի Թերեզայի խումբին, 64-53 արդիւնքով:

Վերջին մրցումը Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐներուն տղոց խումբերուն միջեւ էր: Գահիրէի խումբը կը խաղար անհոգ ու թոյլ, այնքան, որ Աղեքսանդրիոյ տղաքը մի քանի անգամ առաւելութիւն արձանագրեցին. սակայն վերջ ի վերջոյ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի տղաքը յաղթեցին, 75-55 արդիւնքով:

Շաբաթ օրուան առաջին մրցումը 18 տարեկանէն վար տղոց խաղ մըն էր, հիւրընկալ ակումբին եւ Հելիոլիտոյի տղոց խումբերուն միջեւ. Սրբուհի Թերեզայի պատանիները յաղթեցին եւ ստացան բաժակը, որ նուիրած էր տիար Ճօ Պետրոսեանը: Տրուած ըլլալով որ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐն ու Հ.Մ.Ը.Մ. Արարատը պատանիներու պասքեթ-պոլի խումբերունին, աւելի լաւ պիտի չըլլա՞ր, եթէ այդ

խումբերը հրաւիրուէին, փոխան տեղական խումբերու:

Օրուան երկրորդ մրցումը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի տղոց խումբերուն միջեւ էր, որ միշտ ամենահետաքրքրականը կ'ըլլայ: Այս անգամ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը առաջին իսկ վայրկեանէն բուռն պաշտպանութեամբ ու խիզախ յարձակումով շննցուցին Արարատի տղաքը, որոնք անկարող եղան նոյնիսկ դիմադրութիւն ցոյց տալու: Առաջին քառորդախաղը աւարտեցաւ 21-4 արդիւնքով, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ: Եւ այսպէս, նոյն ընթացքով շարունակուեցաւ մրցումը. Արարատի համակիրները, համակերպելով պարտութեան հետ, այլեւս չէին իսկ քաջալերեր իրենց խումբը: Մրցումը աւարտեցաւ 83-37 արդիւնքով, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիկներուն:

Կիրակի օրուան աւարտական մրցումը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Արբուի Թերէզայի տղոց խումբերուն միջեւ էր: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիչը խաղին մեծ մասը վստահեցաւ երիտասարդ եւ նոյնիսկ պատանի մարզիկներուն, որոնք հոյակապ խաղարկութիւն ցուցաբերեցին եւ արժանի եղան բաժակին տիրանալու, 86-48 արդիւնքով:

Խմբապետ Արամ Աբիկեան ստացաւ բաժակը, որ նուիրած էին տէր եւ տիկին Գրիգոր Միքայէլեանը: Վարձքը կատար խումբին պատասխանատու Ռուբէն Սիմոնեանին եւ օգնականներ Ժիրայր Սուլթանեանին եւ Արմէն Իրատեանին այս



յաղթանակին համար:

Այսպիսով աւարտեցաւ 2024-ի հինգ մրցաշարքերուն վերջինը:

Սօսի Ներերեւան-Յակոբեան Դեկտեմբեր 2024

ԾԱՆՕԹ. Հելիոպոլսոյ մէջ Հայ Կաթողիկէ համայնքին համար եկեղեցիի մը շինութեան հիմնաքարը կը զեպեղուի 7 Յունուար 1931-ին, Շարա Ռաշիպի եւ Շարա Ասիութի անկիւնը: Եկեղեցիին կառուցումը կ'աւարտի 7 Փետրուար 1932-ին եւ կը կոչուի Սրբուհի Թերէզա Մանուկ Յիսուսի: Եկեղեցիին ճարտարապետն է Կարօ Պալեան, իսկ շինութեան յանձնառուն՝ Յակոբ Յովհաննիսեան:

Աղբիւր՝ «Նիւթեր Եգիպտոսի Հայոց Պարմութեան Համար», Ա. Հապոր, Արտաշէս Հ. Գարպաշեան, 1943 Տպարան Նուպար – Գահիրէ





ԱՆԴԱՄԱԿԱՆ

ՀԲԸՄիության Գահիրէի Մասնաճիւղը խորապէս կը ցաւի մահուան համար իր երկարամեայ անդամներէն եւ վարչութեան գանձապահի պաշտօնը երկար տարիներ վարած

ՄԻՍԱՔ ԶԷՉԷՆԵԱՆԻ



Որ պատահեցաւ 14 Դեկտեմբեր 2024-ին:

Թաղման կարգը տեղի ունեցաւ Կիրակի, 15 Դեկտեմբեր 2024-ին, Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, իր հարազատներուն, բարեկամներուն եւ ՀԲԸՄի շրջանակին ներկայութեամբ:

Մեր խորազգաց ցաւակցութիւնները տիկին Մարի Զէչէնեանի, երկու զաւակներուն՝ Հարիի եւ Արմէնի, անոնց ընտանիքներուն, բոլոր հարազատներուն եւ բարեկամներուն:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:



Եգիպտահայ գաղութը վերջերս կորսնցուց իր ժրաջան, երկար տարիներ գաղութին նուիրուած եւ Կոկանեան Սրահի անդամ

ՄԱՐՕ ՍԱԳԱՅԵԱՆ-ՆՇԱՆԵԱՆՆԸ

7 Յունուար 2025-ին, Մոնթրէալի (Գանատա) մէջ:

«Տեղեկատու»ն իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալին ամուսնոյն, ընտանիքին, բարեկամներուն եւ բոլոր եգիպտահայութեան:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՀԲԸՄիության Գահիրէի Երուանդ Գ. Աղաթօն գրադարանը շնորհակալութեամբ ստացած է տիկին Ալին Պըլըքտանեան-Ճիզմէճեանէն «Հին Հայկական Մանրանկարչութիւն» մեծածաւալ հատորը, որ հրատարակուած է Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութեան կողմէ, Երեւան, 1952-ին:

Հատորը ունի ուսումնասիրական բաժին մը հայերէն եւ ռուսերէն լեզուներով, եւ մանրանկարչական բազմաթիւ գեղեցիկ վերարտադրութիւններ: Չափերը՝ 40x48 cm.:

Պէյրութի (Լիբանան) Գոհար Գրադարանէն շնորհակալութեամբ ստացանք «Անկրկնելի Ժիրայր Դանիէլեանը» գիրքէն երկու օրինակներ:

Այս հատորը հրատարակուած է Երեւան, 2023-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ, «Առ ի գնահատանք Ժիրայր Դանիէլեանի (1941-2022) կրթական եւ մտաւորական մեծ վաստակին», ինչպէս գրուած է գիրքին սկիզբը:

Գիրքը կազմած եւ խմբագրած է Երուանդ Տէր Խաչատուրեան:

